

491.99-5
n-47



Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

Հաջող Լեզվի
Թերականութեալին

Գեղաբանութեալին

ԴԱՍԱԳԻՐք
ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Պ
ԱԾՏՅԱՆ

1934

ՅԵՐԵՎԱՆ

04 MAY 2010

Թ4-453/a
491.99-5
n-47

Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ԴԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՎԱԲԵՐՆՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍՏԱԿԵՐՔ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍՏԱԿԵՐՔ

Հաստատված և ՀԱՅՀ Լուսժողկոմատի կողմից

Г.П.Б. в ЛНГР
А. 1934 г.
Акт № 213

ԽՆԲ. № 6562

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿ ԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1934

Բոլոր դիտողությունները գրքի
մասին ուղարկել ՀՍԽՀ Լուսմող-
կոմատի Դպրոցական վարչու-
թյան՝ հեղինակին հանձնելու
համար։



40643-65

Պատ. Խմբագիր՝ Մ. Մկրտչյան, Տեխ. Խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբազրիչ՝ Ա. Տ.-Մկրտչյան

Հրատ. № 3016, Գլավ. № 8583 (բ), սպառվ. № 190, տիրաժ 30,000
Հանձնված ե արտադրության 16 հանճիսի 1934 թ.

Ստորագրված է տակառության 16 հունիսի 1934 թ.

U. S. B. F. U. T.

Այս դասագիրքը հանդիսանում է խորհրդային հայ գրական լեզվի (հայ պլութարքատի դասակարգային լեզվի) ձևաբանության սկստեմատիկ շարդրությունը:

Գաղպությունը՝ Գիրքը կազմելու ընթացքում ողտագործել ենք ավելի կարող յեղբայրական Ռուսաստանի մասնագետների փորձը, վորոնք կազմել ու հրատարակել են քերականական ձեռնարկներ և վարժության գրքեր Համեկ(ը)կ կե-ի 1931 թվի սեպտեմբերի 5-ի և 1932 թ. ոգոստոսի 25-ի հայտնի վորոշումներից հետո Պատագործել ենք նաև հայերեն քերականությունների, հատկապես պրոֆ. Մ. Սրբոյանի «Հայոց լեզվի տեսություն» և «Աշխարհաբարքի շարահյուսություն» աշխատությունների գիտական և մեթոդական արժեք ներկայացնող մասերը, մերժելով նրանց լոգիստական և գործալիստական դրույթները:

Նյութի ընտրությունը և դասավորությունը կատարելիս նկատի յետնված, վորաշակերտությունը տարբական դպրոցում քերականությունից տառրական գաղափար ստանում եւ:

Այս լրացրած պատճենը կազմութիւն է հանդիսացնելու և նկատի առնված նաև քերականական կատեղորիաների սահմանումները տալու և նյութի մեթոդական բաշխումը կատարելու ժամանակի:

Խոսքի մասերի խմբավորման մեր ձևը հիմնավորվում է նրանով, վորքառերի կատեգորիզացիայի ժամանակ անհրաժեշտ է հնարյա յեղածին չափայունություն տալ բարի, վորպես քերականական-ձեսքանական տեսակի, ըմբռնումին, վորպեսդի հեշտ լինի պարզել նրանց ֆունկցիոնալ արժեքը խոսքի մեջ:

Մինչեւ հիմա հրատարակված քերականությունները կրում են ֆորմալիզմի և կամ լոգիզմի դրոշման փորմալիզմը, այսինքն քերականության ուսուցումը վորպիս ձև, սխոլաստիկա յեւ, կարող ե բժացնել դպրոցականի մտածելու ուսակությունները, իսկ քերականական լսդիզմը, այսինքն քերականության ուսուցումը վորպիս տրամաբանություն, մետաֆիլիզմ յեւ և կարող է հնաց առ ուղղությամբ տանել աշակերտի մտածողությունը:

Մեթոդակես ավելի ճիշտ ե, յուրացման համար՝ հեղտ և բացարձելու տեսակետից՝ նպատակահարմար, յերբ բառի, վորպես խոսք կառուցելու շինանլութի, ըմբռնութմն ընդհանրապես չի շփոթվում բառի մասնավոր, կօնկրետ կիրառության հետ նախադասության մեջ։ Ուրիշ խոսքով՝ բառերը վորպես խոսքի մասեր, շինանյութեր, իրենց տեսակներով չպիտի նույնացվեն բառերի, վորպես նախադասության անդամների հետ։ Այս յեղանակով կորսերովի միենույն բառի ընդհանուր և մասնավոր էմաստի զիալեկտիկական հակագրությունն ու միասնությունը։

իհարկե, աշակերտներին չպետք և հաղորդել քերականության վիլիսո-
փայությունը, բայց աշակերտների համար պետք է կառուցել այնպիսի
քերականություն, զոր ամենապուրին ձևով մշակի նրանց մեջ դիտեկտի-
կական մասածողություն այն չափով, վորչափով այդ վերաբերում և քերա-
կանության:

Քերականության ուսուցումով ամրողջովին չի սպառվում լեզվի ու-
սուցումը և վոչ ել առանց քերականության հնարավոր և լեզուն լույ սո-
վորել ու սովորեցնել, ինչպես այդ ցույց ավեց վերջին տարիների փորձը,
ուստի լեզուն ավանդելիս անհրաժեշտ և մուտքանել աշակերտի ուսումնական
աշխատանքների պրակտիկայում նաև ...քերականական վարժություններ
թե դասարանում և թե տանը (Համեր) կ կ 1932 թ. ոգոսառի 25-ի վորո-
շումից):

Քերականության ավանդումը խոշորագույն չափով նպաստում է լեզվի
ուսուցման գործին և դպալիորեն հեշտացնում լեզվի յուրացումը: Դրա հետ
միասին քերականության ուսուցումը նպաստում և դպրոցականի ընդհա-
նուր զարգացողության:

Լեզուն սովորելուց և սոցիալիստական շինարարության բարձր պա-
հանջները բավարարող զարգացողություն և պատրաստություն ձեռք բե-
րելուց հետո հոգ չե, յեթե մեկը մոռանա քերականական տերմինուղղիան,
քանի վոր նա լեզվի քերականությունը զիտե վորպես ունակություն, վորպե-
միս ու արյուն դարձած հատկություն: Նման մեկը զիտե լեզվի քերակա-
նությունը, բայց վոչ նրա տերմինուղղիան: Ուրեմն քերականական տեր-
մինուղղիան սովորելը միջոց ե և վոչ ինքնանպատակ, ինչպես մտածում են
ֆորմալիստները, վորոնք սեռական ու հայցական հոլովները դուրս վանելով
քերականության միջից, կարծում են, թե հեշտացրել են քերականության
ուսուցումը. քանի վոր ձեւը անդիք անելու գործը զրանով հեշտանում ե-
րայց զրանով նրանք արջի ծառայություն են մատուցել և շփոթ ստեղծել
այդ հոլովների և ուղղական ու հայցական հոլովների կիրառության մեջ,
վորովնետեւ իրենք ֆորմալիստներն են ընդունում, վոր այդ հոլովները մեր
լեզվի մեջ վորպես կիրառություն, կարծում ենք՝ վորոշ չափով նաև վոր-
պես ձեւ, գոյություն ունեն:

Ֆորմալիստների այդ մեթոդաբանական սխալը ցույց ե տվել մեզ, թե
ինչպես պետք ե ֆորմալիզմից խուսափել և հայոց լեզուն լիակատար չա-
փով արտացոլել քերականության մեջ:

Հավակնություն չունենք անթերի կարծելու մեր աշխատանքը նրանք
բոլոր զիտողությունները շնորհակալությամբ հաշվի կառնենք, յեթե, ուսաբ-
կնպաստեն կատարյալ քերականություն կառուցելու գործին:

ՀԵՂԻՆԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քերականությունն ուսումնասիրում է խոսքի կառուցվածքը, այսինքն՝
ըստերի կառուցվածքը, փոփոխությունները և բառերի կապակցությունը
նախադասության մեջ, ինչպես և նախադասությունների կառուցվածքը:

Քերականությունը լեզվի գիտուրյուն ե, գործնական մի-
ջոց, վորն ոճանդակում ե լեզվին տիրապետելուն:

Մեթոդական նկատառումներով քերականությունը բաժանվում է յեր-
կու հիմնական մասի՝

1) Զեթանուրյան և 2) տարահյուսուրյան:

Զեթանուրյունն ուսումնասիրում է բառերի կառուցվածքն ու փոփո-
խուրյունները խոսքի մեջ:

Տարահյուսուրյունն ուսումնասիրում է բառերի կապակցուրյունն ու նա-
խադասուրյունների կառուցվածքը:

Զեթանուրյան մեջ զետեղվում են նաև հեջունաբանությունն ու
տարրեր և ուղղագրուրյունն:

Հնչյունաբանուրյունը բառերը կազմող հնչյունների ու երանց շարժման
(փոխուման) ուսմունքն ե, իսկ ուղղագրուրյունը ավանդական կարգով և կոմ-
ունիկով սահմանված անխառ գրելու կանոնների հավաքածուն ե:

Հնչյունների և բառաձերի ուսումնքը դպրոցական հին քերականություն-
ներում կոչվում եր սառագրանություն:

Դրանցից գուրմա՝ քերականության մեջ ե մտնում նաև կետադրու-
թյան կանոնների ուսմունքը:

Ուղղագրության մի շարք կանոններ և հատկապես կետադրությունը
կապված են քերականության հիմնական բաժինների՝ ձևաբանուրյան և
շարահյուսուրյան հետ: Հայերենում կան բավական թվով բառեր, վորոնց
ուղղագրությունը կապված է գործությունների համար և հաղորդված ե ավան-
դաբար:

Կետադրությունը մեծապես ողնում է կարդացածը և զրվածը համեմա-
լուն:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 1. ՀՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Խոսել՝ նշանակում ե արտահայտել մտածածը:

Մի անգամից մի եղուրի մասին մարդու մատածը կոչվում է մտածուն : Մտածությունը կարող է մի, կամ մի քանի մտքերից կաղմած լինել կեզվով արտահայտված մտածությունը կոչվում է խռով :

Խասք բաղկացած եւ ամբողջական միավարաներից, Այդ միավորներից լուրաքանչյուրը քերականորեն ձևավորված եւ ավելի կատ պակաս չափով ամբողջահած միաք եւ արտահայտում:

Խոսքի քերականութեան ձևավորված միտվարը, վարը բաղկացած է մի կամ մի քանի քառերից և արտահայտում է ամբողջացած միտք, կրչկում է Յա խառնագույնը:

Յեթե մտածությունը կազմված է մի մեջից, ապա արտահայտվում է մի նախադասուրյամբ, Որինակ՝ ԽՍՀՄ-ի աշխատավորությունն առաջին հնգամյակը կատարեց չորս տարում:

Բանավոր խոսքի մեջ հետ ե զորշել, թե յե՞րբ ե ավարտվում խոսքի մի միավորը, մի նախադասությունը և սկսվում նորը, քանի վոր յուրաքանչյուր նախադասության վերջում ձայնը իջնում ե և կատարվում ե թե թե դադար (պառւղա): Գրավոր խոսքի մեջ նախադասության վերջում դրվում ե մերօպակե (։):

2. Նախադասությունը բաղկացած ե մի կամ միքանի բառերից, վորոնցից յուրաքանչյուրն իր իմաստն ունի: Այսպիսով բառն ել նախադասության միավորն է:

Նախաղասության մեջ բառերն իրար հետ կապված են իմաստով։ Բառերի կապը նախաղասության մեջ արտահայտվում և բառերի յուրահատուկ վերջավորությամբ, նաև առանձին բառերով, այսպիս կոչված՝ նախաղասություններով, յետաղրություններով և շաղկապներով. որինակ՝ Սահմակը հեռացալ քաղաքից նախաղասության մեջ Սահմակ, նեռանուր, բողաք բառերը իրար հետ կապված են և մի միտք են արտահայտում՝ ը (Սահմակը), ացակ (հեռացավ) և ից (քաղաքից) վերջավորությունների ոգնությամբ։ Սահմակը զնաց դեպի տուն նախաղասության մեջ միտքն արտահայտվում և ը (Սահմակը), աց (գնաց) վերջավորությունների և դեպի նախաղասության ոգնությամբ։

§ 2. ՅԵՆԹԱԿԱ ՅԵՎ ՍՈՐՈԳԱԼ

Յուրաքանչյուր նախալասության մեջ գործածված բառերից յերկու սրբ արտահ սլաքում են հիմնական միտքը. մյուսները լրացնում են այդ

միտքը: Ամեն մի նախադասության միաք ցույց է տակին, թե ո՞վ կամ ի՞նչ ինչ է անում (արեց, անելու յեւ և այլն) կամ լինում (յեղավ, լինելու յեւ և այլն):

Քանի վոր մենք շրջապատված ենք նյութական աշխարհով, վորն աբտացոլվում ե մեր գիտակցության մեջ, առաջ բերում հասկացողություններ, ուստի յուրաքանչյուր ճանաչված առարկան կամ հասկացողությունն իր հատկությամբ հանդերձ հանդիսանում ե մեր մեջի առարկան:

Նախադասաւրյան մեջ այն քառը, վորոն արտահայտում և մսի նյուրը, առարկան, այսինքն ցույց է տալիս, թե ո՞վ կամ ի՞նչն է գործողություն կատարում կամ յեղելուրյան մեջ լինում, կոչկում է յենքակա:

Նույնը և բամին (ի՞նչը) սարծում ե ծառը նախադասության մեջ բամին յենթակա յե, ցույց ե տալիս այս մտքի առարկան, կամ՝ մատիր (ի՞նչը) լավ և գրում նախադասության մեջ մատիր յենթակա յե, ցույց ե տալիս, թե ով ե զործող անձը, ցույց ե տալիս այս մտքի առարկան:

Նախադասության մեջ այն բառը, վորը ցույց է տալիս, թե ինքը կանոնական ի՞նչ է անում կամ լինում, կոչվում է սառուզյալ։ Սուրագյալը պատասխանում է ի՞նչ է անում (արեց, անելու յեւ և այլն), ի՞նչ է լինում (յեղափ լինելու յեւ և այլն), ինչպիսի՞ն է և կամ ի՞նչ է հարցերին։

Արդինակ՝ Առարիկը զնում ե դպրոց նախաղասության մեջ զնում ե ստուգադիմության մեջ առաջարկը հարվածային աշակերտ է նախաղասության մեջ աշակերտ է

բամին օարժում ե ծառը նախադասության մեջ օարժում ե ստորոգյալ և
նախադասության մեջ յենքական և սովորողական կոչվում են նախադա-

ՅԱՌԵՐԱՆ ԳԼԽԱՎԻՄ ԱՆԴՎԱՆԵՐ:

§ 3. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Յենթակայից և ստորոգյալից բացի շատ հաճախ նախաղասությունն ունենում է յերկրորդական անդամներ, վորոնք լրացնում են յենթական ստորոգյալը, ամբողջազնում նրանց արտահայտած միտքը:

Այն բառերը, վորոնի լրացնաւմ են յենքական, կլինեն յենքականի լրացնմեր։ Դրանք ցույց են տալիս յենթակայի հատկությունը, թիվը, պատկանելիությունը, վերաբերությունը և այլն։

Ստորոգյալը, վորը ցույց ե տալիս նախաղասության մեջ արտահայտած գործողությունն ու յեղելությունը, լրացվում ե յԵՐԿՐՈՊԴԱԼԿԱՆ անդամներով, վլրունք կոչվում են ստորոգյալի լրացումներ:

Սառըովզալի լրացումները ցույց են տալիս, թե ի՞նչ պայմաններում,
պարագաներում (աեղ, ժամանակ, ձև, նպատակ), ի՞նչ առարկայի վրա և
կամ ի՞նչ առարկայի առնչակցությամբ և կատարվում գործողությունը:
Լրացումները կարող են արտահայտվել բայց խոսի մասերով, բացի կապից,
շաղկապից և ձայնարկություններից:


Յենքակա, սորոգյալ, լրացաւմներ անունները նախաղասության մեջ
բառերի պատճենի անուններ են

ՀՆԳՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 4. ԽՈՍԵԼՈՒ ՈՐԴԱՆՆԵՐԸ

Խոսելու գործողությանը մասնակցում են հետեւյալ որդանները. ըերբանը (շրթունք, ատամներ, քիմք), լեզուն և կոկորդը: Խոսելիս թոքերից ողն արտաշնչվում է, այսինքն անցնում ե կոկորդով և բերանով ու ոռունգով (քթանցքներով) դուրս գալիս:

Կոկորդն ունի միանալին լարեր, վորոնք կոչվում են ձայնալարեր:
Յերբ ձայնալարերը ձգվում են, նրանք մոտենուեան իրար, ու արտա-
շնչվող ողբ ճեղքելով անցնուե և նրանց միջով։ Այդ ժամանակ նրանք տա-
տանվում են և առաջ բերում ձայն։



ՀՀ—ըրթոնք, շի—շնչափող, աա—ատամներ, ըշմ—ըիմըի
շարժական մաս, ծլ—ծայսալարեր:

Լեզվի, շրթունքների, բերնի վողջ խոռոչի, ինչպես և քթի միջոցով
մարդու ձայնն այս կամ այն յիրանդն ու կերպարանքն ե ստանում, վորը
հասարակական գիտակցության մեջ ըմբռնվում ե վորպես լեզվի ամենաա-
փոքր տարր և կոչվում ե հնչյուն։ Բառը բաղկացած ե մեկ կամ միքանի-
ննչյուններից։ Որինակ՝ դու ու դասը սովորեցիր նախադասության մեջ դու
բաղկացած ե յերկու հնչյուննեց, քո նույնպես յերկու, դասը՝ չորս, իսկ սովորե-
ցիք ինը։

Հնչյուններն արտասահման կամ արտարեցիլիս մեծ դեր ե կատարում լիզաւն. յերբեմն նա դիպչում ե բերնի քիմքի միտեղին, յերբեմն՝ մրուս (որինակ՝ զ, ն, կ, իս), յերբեմն ելատամակրին (որինակ՝ դ, ս, թ), և զրանից՝ արտարեցված ձայնը կամ աղմուկը դառնում ե ննջյուն: Դրա հետ միասին յերբեմն լեզվի ծայրն ե դիպչում քիմքին, յերբեմն՝ միջին մասը և յերբեմն՝

վերջին մասը՝ Երբանեները մերթ բաց են մոռւմ, մերթ առաջ են մղվում, մերթ իրաք լուս և ապա հուանում, և դրա հետևանքով նույնպես ստացվում են հնչյուններ (որինակ՝ ա, ու, թ):

§ 5. ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆ ՈՒՄԸ

Հնչյունները մինում են ձայնավոր և բաղաձայն:

Յերբ ձայնն արտաքրվում է առանց լեզվի և երբաների խոշմուսի, ստացվում է ձայնավոր (ա, ի, ո, ու, թ):

Յերբ երբաներն ու լեզուն ձայնի արտաքրման ժամանակ այս կամ այն կերպ խոչընդոտ են հարուցում, ստացվում է բադաձայն (թ, գ, դ և այլն) Որինակ՝ յերբ արտասանվում է ա, բերանը բացվում է, ձայնն առանց խոսընդուածի դուրս և գալիս, յերբ արտասանվում է ի, ձայնը նույնպես առանց չուչընդուածների դուրս և գալիս, մինչդեռ բ արտասանելիս լեզուն դիպչում է ատամններին և խանդաբռում ձայնի դուրս գալուն, գ արտասանելիս լեզվի յետին մասը դիպչում է քիմքին և մի պահ խոչընդուածնում ձայնի դուրս գալուն և այլն:

§ 6. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Ժամանակակից հայերենում կա 6 ձայնավոր՝ ա, ի, ո, ու, թ. այս ձայնավորները խիստ պարզ են և միմյանց հետ չեն շփոթվում:

§ 7. ԲԱԴԱՑԱՅՆՆԵՐ

Հայերենն ունի 30 բաղաձայն. դրանք են՝ բ, գ, դ, թ, թ, ժ, լ, մ, ծ, կ, հ, ձ, ռ, ճ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, վ, տ, թ, ց, փ, ք, ֆ:

Ի կոչվում են նաև կիսաձայն:

1. Բաս արտաքերման սեղի բաղաձայները լինում են.

ա) Երբային՝ բ, պ, փ.

բ) Առաջնալեզվային՝ ջ, ձ, չ, ժ, գ, ւ, ս, յ, դ, տ, թ, ժ, ծ, ռ, ո.

գ) Յետնալեզվային՝ գ, կ, ք, դ, լո, (լո, դ կոչվում են նաև կոկորդային).

դ) Ռենգային՝ մ, ն.

ե) Երբառամբային՝ վ, փ.

դ) Հագագային՝ հ.

մ, ն, ը, ո, ր, բաղաձայնները կոչվում են նաև ձայնորդ:

2. Բաս արտաքերման յեղանակի բաղաձայները լինում են.

ա) Պայրական՝ (արտասանվում են պայրականվ)՝ բ, գ, պ, դ, թ,

ժ, ծ, ը, չ, ռ, ժ, կ, ք.

բ) Նփական (արտասանվում են լեզվի և մյուս որդանների շփումով)՝

զ, ս, շ, ժ, լ, ո, վ, ֆ, հ, յ:

3. Բաս աղմուկի և ձայնավարերի մասն կցուրյան չտփի բաղաձայները լինում են.

ա) Ջալնեղ՝ բ, դ, գ, ձ, թ, ժ, դ, դ, դ, վ.

բ) Խուլ՝ պ, տ, կ, ծ, ռ, շ, չ, լո, փ, փ, թ, ք, ց, չ:

4. Բաս կտակմուրյան բաղաձայները լինում են.

ա) Պարզ՝ բ, գ, դ, տ, կ, վ, փ, զ, ս, ժ, ւ, ի, հ, յ:

բ) Բարդ՝ փ, թ, ք, ձ, ծ, ց, ջ, ձ, չ:

Բարդ հնչյունները կաղմակելի հնչյուններից, բայց իրենց արտասանությամբ վոչ թե բաղադրիչ հնչյունների գումար են, այլ տուանձին վարակով հնչյուն:

Համայս՝ փ = պ + հ, բ = տ + հ, գ = կ + հ, ծ = դ + դ, ժ = ս + ս, չ = թ + շ, պ = տ + շ + ս, ն = տ + շ, չ = թ + շ + ս, լ = դ + դ:

Աղուակ № 1

Հայերենի բաղաձայնները		Պայրական		Շփական	
Ձայնորդ	Կոկորդ	Ձայնեղ	Խուլ	Խուլ	Շփակ
Շրթնային	մ	—	բ	պ	փ
Շրթնատամային	—	—	—	—	զ
Առաջնալեզվային	ն	սր, ո	դ	ժ, ձ	չ, թ, զ
Յետնալեզվային	—	—	կ	ք	լ
Հագագային	—	—	—	—	հ

Հնչյունը գրվում է պատմականորեն ընդունված նշանով, վորը կոչվում է գիր կամ տառ:

Տառերի ավանդուկան շարքը առաջին տառերի տնունով կոչվում են յիշերն կամ այբուբեն:

Ամեն տառ գրվում է յերկու ձեռով մեծատառ և փերատառ:

Հայերեն այբուբենը:

1. Հին այբուբեն.—

ա, բ, գ, դ, է, թ, ժ, ժ, լ, մ, ծ, ռ, չ, պ, յ, ն, շ, չ, ս:

բ, չ, ո, ս, վ, տ, թ, ց, լ, փ, ք, կ, օ, ֆ:

2. Նոր այբուբեն.—

ա, բ, գ, դ, է, թ, ժ, ժ, լ, մ, ծ, ռ, չ, պ, յ, ն, շ, չ, ս:

չ, ո, ս, վ, տ, թ, ց, լ, փ, ք, կ, օ, ֆ:

Բարդ գիր և նաև ու ձայնավորը:

Տպագիր		Տպագիր		Տպագիր		Տպագիր	
մեծա տառ	փ. տ.						
Ա	ա	Լ	լ	Շ	՛	Հ	հ
Բ	բ	Խ	խ	Չ	՛՛	Փ	փ
Գ	գ	Ծ	ծ	Զ	զ	Ք	ք
Դ	դ	Կ	կ	Ջ	ջ	Ե	ե
Ե	ե	Հ	հ	Ջ	ջ	Օ	օ
Զ	զ	Ջ	ջ	Ռ	ր	Ֆ	ֆ
Է	է	Շ	շ	Մ	մ	Վ	վ
Ը	ը	Ր	ր	Ց	ց	Շ	շ
Թ	թ	Ց	ց	Ր	ր	Շ	շ
Ժ	ժ	Ց	ց	Ց	ց	Շ	շ

Տպագիրն ունի տառերի հետեւյալ տեսակները.—

Կա տպագրի մի տեսակ ևս, վոր կոչվում է նուռագիր:

և նշանագիրը կազմված է յ, ե, վ գրերից, և նշանագիրը գրվում է բառամիջում ձայնավորից հետո և առանձին՝ վորպես շաղկապ գործածվելու ժամանակ: Որինակ՝ նաեւ, յիս և դուք:

§ 8. FUN

Բառ տակը հասկանում ենք հնչյունների այնպիսի միացություն, վերև
իմաս կամ նշանակություն ունի. որինակ՝ սեղան՝ հնչյունների իմաստ ունե-
ցող միացություն ե, իսկ դժուան բառ չե, վորովհետեւ թեև հնչյունների
միացություն ե, բայց իմաստ չունի:

Վանի կոչվամ եքառի բաղադրիչ մասը, վորը բաղկացած ե մի կամ մի-
անի հնջյուններից և արտաքերգամ ե մի շնչավ. որինակ՝ Կարապետ, ա-շա-
լերս, ու-սուցիչ և այլն. Մի ձայնալարը կարող ե մի վանկ կաղմել. որինակ
ա-շա-կերտ բառի մեջ առաջին վանկը բաղկացած ե մի ձայնավորից՝ ա-
լւսուցիչ բառի մեջ առաջին վանկը բաղկացած ե մի ձայնավորից՝ աւ. Դրան-
ակառակ՝ նույն բառերի յերկրորդ վանկերը կաղմված են յերկու հնչյուն-
երից՝ մեկը բաղաձայն և մյուսը ձայնավոր (օս և սաւ). Յ. ըդ վանկերը
ապագացած են յերեք և չորս հնչյուններից, ըստ վորում մեկն անպայման
ձայնավոր ե, իսկ մյուսները՝ բաղաձայն:

Նշանակում ե՞ յուրաքանչյուր վանկ մի ճայնավոր պետք և ունենա, աղաձայնները կարող են ավելին լինել կամ բնավ չինել:

ուերը լինում են միավաճիկ, յերկվաճիկ, յեռավաճիկ և բազմավաճիկ:

Միավանի բառերը բաղկացած են մեկ վանկեց, ունեն մի ձայնավոր որինակ՝ տուն, պատ, թիկ, սչ, ոտ և այլն:

Յերկանի բառերն ունեն յերկու վանկ, ուրեմն և յերկու ձայնավոր-ըրինակ՝ կտ-ռու, ԳԵՏ-ՐՈՒ, ՏԵՏ-ՐԱԿ, ԲԵՏ-ՎԱԾ:

ՅԵՐԱՎԻՆԿ բառերն ունեն յերեք վանկ, ուրին և յերեք ձայնավոր-ըրինակ՝ պատուհան, ա-օս-կեց, պահառան և այլն:

Բազմավանկ բառերն ունեն յերեքից ավելի վանկեր և ձայնավորներ. ըստնակ՝ հար-վա-ծա-լին, պա-տա-խա-նա-ըլ-վար-բյան:

§ 10. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառերի վոփոխության ժամանակ, յեր վերջին վանկի շեշտը հաջորդ նոր ավելացած վանկերին և անցնում, արմատական ձայնավորներ՝ ա, ի, ու, երեխինչյանեներ՝ այ և ույ յերբեմն դուրս են ընկնում, յերբեմն ել փոխվում են այլ ձայնավորի, կամ բաղաձայնի։ Այս յերեսությը կոչվում է հնչյունափառություն։ Հայերենում կան հնչյունափոխության հետեյալ գեպերը.

1. ու ձայնավորը փոխվում ե լ ձայնավորի. որինակ՝ ջուր, ջրի, ջրելիր,
տան, տնակ, մուկ, միան, ձուկ; ձկան և այլն:

ու ձայնավորը դասնում ե վ. որինակ՝ լեզու, լեզվական, կառու, կատակի, բու, բվի և այլն:

ու ձայնավորը դուրս և ընկնում. որինակ՝ անաստն, անասնական, հա-
տուել, հատկություն և այլն:

2. ի ձայնավորը փոխվում է ը ձայնավորի. որինակ՝ կիր, կրազուր, գիրք, սրբի, սիրս, սրբ և այլն

ի ձայնագորը դուրս է ընկնում. որինակ՝ նեմարիս, նեմարտախառ, ամիս, ամսի, կալին, կավճի, նահին, նանին և այլն:

ի ձայնավորը հաջորդող ձայնավորից առաջ յերբեմն դուրս երնկնում,
յերբեմն հաջորդող ձայնավորի հետ միասին դառնում է յա որինակ՝ քննա-
մի, քննամական, բարի, բարարյուն, բարյացական, վարդի վարդյակ, նոզի, նո-
զյակ:

Ճայնավորը միտքանի և մի շարք բառերուն կ բառերի փոփոխու-

թյունների մեջ չեյքնթարկվում վերսհիշյալ կանոնին և պահպանվում և. որիւնակ՝ ձի, ձիալոր, մի, միակ, արի, արիական:

3. Ե ձայնավորը դառնում է ի միքանի բառերի մեջ. որինակ՝ կես, կիւսել, պարտեղ, պարտիղի, տեր, տիրել, հանդեպ, հանդիպել, ծես, ծիսակատարություն: Այս կանոնը մեր լեզվի մեջ այժմ շատ հաճախ մի շարք բառերի նկատմամբ չի պահպանվում:

4. յա վանկը մի շարք բառերում դառնում է ել կամ ե. որինակ՝ ուաշտոնյա, պաշտոնեյություն, մատլան, մատենավար, գործունյա, գործունեյություն և այլն:

5. ու յերկնչյունը դառնում է ու. որինակ՝ թույլ թուլակազմ, բույր, բուրավետ, բույս, բուսական. լույս, լուսավոր և այլն:

6. ա ձայնավորը դուրս է ընկնում հազվագյուտ դեպքեցում. որինակ՝ բաղաք, բաղենին:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Քերականուրյան այն մասը, վորը սովորեցնում է բառեր կազմելու և վերլուծելու ձևերը, կոչվամ է բառակազմություն:

Բառերն իրենց կազմությամբ կարող են ունենալ հետեւյալ ձևեր՝ արմատ և վարովնետե բաղադրիչ մասերի չի վերածվում, կապված և իմաստի հետ և բոլոր միացությունների մեջ անփոփոխ է:

§ 11. ԱՐՄԱՏ

Բառերի այն մասը, վորը չի բաժանվում բազադրիչ մասերի, անփոփոխ է բայց գեպերում, բայց հնչյունափոխություննեց, և մեր լեզվի մեջ կապվում է այս կամ այն իմաստի նետ, կոչվում է արմատ. որինակ՝ մարդ-իկ, մարդկային, մարդկության, մարդավարի, մարդանուն բառերի մեջ մարդ բառն արմատ և, վարովնետե բաղադրիչ մասերի չի վերածվում, կապված և իմաստի հետ և բոլոր միացությունների մեջ անփոփոխ է:

Կարդաբ կարդացած, կարդացող, կարդացել, կարդում բառերի մեջ կարդ մասը չի բաժանվում բաղադրիչ մասերի, կապված և իմաստի հետ և անփոփոխ է, ուրեմն արմատ է: Արմատներից շատերը գործ են ածվում վորովիս առանձին բառեր. գրանք կոչվում են պարզ կամ արմատական բառեր. որինակ՝ բակ, մայր, տուն, տերեւ, ծառ և այլն:

Կան այնպիսի արմատներ, վորոնք առանձին գործածություն չունեն և վորոշակի իմաստ են արտահայտում միայն մասնիկներ ստանալով: Որինակ՝ նիանալ, նիացում, նիասքանչ, վորոնց արմատն և նի. նարկած, նարեւ հարուստ բառերի արմատն և նար:

§ 12. ՍԴԱՆԵՑ

Այն մասնիկը, վորն ավելանում է արմատի վրա, նրան իմաստ տալիս կամ իմաստը փոխում, կոչվում է ածանց, Որինակ՝ սց. դարբին, դարբն ոց, նյութն, հյուսն ոց, մատն, մատն ոց և այլն:

Ածանցներն առանձին բառարմատներ են յեղեւ վոր ժամանակի ընթացքում փոփոխվել են, կորցրել իրենց հիմնական իմաստը և վերածվել ձևի և ձևի միջոցով իմաստ արտահայտող մասնիկների մի մասը դեռ կապվում են բառարմատների հետ, շատ քչերը գործ են ածվում նաև վորովիս բառարմատ. ածանցների որինակ են ծառայում:

Ուրյուն. միուրյուն, ընկերուրյուն, գյուղացիուրյուն և այլն:

Ային. ածխային, հարվածային, բանակային և այլն:

Եղեն. լուսեղեն, վոսկեղեն, արծաթեղեն, մրգեղեն:

Ան. անտուն, անցանկալի, անբախտ և այլն:

Արտ. արտադրել, արտահանել, արտադրողական:

Ածանցները լինում են յերկու տեսակ՝ նախածանց և վերջածանց:

§ 13. ՆԱԽԱԾԱՆՑ

Նախածանցը դրվում է բայցըմտակ առաջ: Հայերենում կան բավական թվով նախածանցներ, վորոնցից են՝

Առ. առհասարակ, առայժմ, առժամանակ, առժիշտ, առողջ և այլն:

Բնդ. բնդիանուր, բնդեմ, բնդարձակ, բնդառաջ, բնդմիշտ և այլն:

Արտ (նշանակում ե գուրս). արտահանություն, արտադրել արտադրել, արտաքրել արտատովել և այլն:

Բաց (նշանակում ե հեռու, մի կողմ). բացակայել բացառություն, բացատրել և այլն:

Գեր (նշանակում ե վեր, բարձր աստիճանի). գերազնահատել, գերանել, գերակատարել, գերմարզ, գերիշխանություն, գերածախք, գերհարվածային, գերբնական և այլն:

Դեր (նշանակում ե փոխանակ). դերանուն, դերբար:

Թեր (նշանակում ե թերի). թերագնահատել, թերակատարել թերալել և այլն:

Հակ (նշանակում ե հակառակ). հակագրել, հակասել, հակաճառել, հակոտնյա, հակահարված, հականեղափոխական և այլն:

Համ (նշանակում ե նույն, միևնույն). համազոր, համալեզու, համադաշյել, համապյուղացի, համամիտ, համընթաց և այլն:

Համ (նշանակում ե վողջ, բոլորը, ամենը). համահայաստանյան, համամիութիւնական, համամարդկային, համաշխարհային, համատարած, համաւսարան, համագումար և այլն:

Հեղ (նշանակում ե փոխել, շուռ տալ). հեղափոխություն, հեղաշրջում:

Մակ (նշանակում ե վրա). մակագրություն, մակրա, մակերես, մակնացություն և այլն:

Յենք (նշանակում ե տակը). յենքարկել, յենքաղել, յենքակա, յենքական և այլն:

Նախ (նշանակում ե առաջ, առաջին, սկիզբ). նախահեղափոխական, նախահոկածքերյան, նախարան, նախապատճառ, նախալեզու, նախատիպ, նախապատմական, նախապատերազմական և այլն:

Ներ (նշանակում ե ներս, ներսում). ներգործել, ներգրավել, ներայաց ներխուժել, ներգաղթել, ներդրում և այլն:

Նար (նշանակում ե կից). նարագրել, նարայուսել, նարունակել և այլն:

Պար (նշանակում ե շուրջը, չորս կողմք). պարբերություն, պարագիծ, պարփակել, պարունակել, պարօտոտի և այլն:

Վեր (նշանակում ե կրկին, վրա, վեր). վերականգնել, վերանայել, վերանորոգել, վերահաստատել, վերամշակել, վերհիշել, վերլուծել, վերտրակու, վերակացու, վերագիր, վերահսկել վերագոնալ, վերասլաց և այլն:

Տար (նշանակում ե տարբեր, ոտար, ենուու նուկ գուրս). տարածայնու-

թյուն, տարորինակ, տարակաթիք, տարաշիարհ, տարածել, տարակուսանք, տարաժամ:

Տամ (նշանակում ե այս ու այն կողմից, մի ծայրից մինչև մյուս ծայրը). տամարանություն, տամաղություն, տամագիծ և այլն:

Փոխ (նշանակում ե փոխարեն, փոխելով մեկից մեկ ուրիշ տեսակի կոմ մեկ ուրիշ տեղ). փոխաղաք, փոխանցել, փոխարերություն, փոխառություն և այլն:

§ 14. ՔԱՅԱԿԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

Քայասական նախածանցները տալիս են բառին ժխտական կամ հակառակ իմաստ: Քայասական նախածանցներն են. ան (անտուն, անպետք, անգասակարդ և այլն), ապ (ապաշնորհ, ապերախտ, ապուշ և այլն), ս (սհաճ, սկես, սդեղ և այլն), դժ (դժբախտ, դժողուն և այլն), չ (չափ, չդիտություն, չխոսկան և այլն):

40643-67

§ 15. ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Հայերենին հատուկ և վերջածանցներով բաղադրություններ կազմելը: Ունինք մոռավորտպես 100 վերջածանցներ: Դրանցից կարևորներն են.


Ա.ծ (համատարած, կատարած), ածու (կատարածու), ակ (լճակ), ական (պրոկտարական, կոմունիստական), ակի (կրկնակի), ային (հարվածային, ոդային), այն (միանգամայնի), ան (վիպատանի), անֆ (գովաստենի), անց (սրտանց), աս (գունաց), բար (ընկերաբար), զին (վողբազին), զույն (մեծագույն), եղ (համեղ), եղեն (զուկեղենի), ենի (մայրենի), ենին (Արամենի), զրաբարի ենմի, Արամենմի), ես (պահես), երարի, րար (հինգերորդ, յերկրորդ), ի (հաճելի), իկ (փոքրիկ), իշ (ուսուցիչ), կա (վախկաս), մունի (ուսմունի), յա (փայտայ), յակ (հնգամյակ), յան (լենինյան, ներսիսյան), յուն (հնչյան), ոց (խշխոց, դպրոց), որդ (առաջնորդ), որեն (լայնորեն), ուրյուն (կուռակությունի), ունի (ընկերունի), ափար (մասնավար), ուլյը (յելուլը), ուլյ (հացարակ), ունի (ծնկերունի), պան (դռնապան), պետ (մոտավորապետ), սամն (Հայաստան), ավես (հոտովես), վոր (բանվոր), պետ (հոչակավոր), արան (կայարան), ցի (գյուղացի), ացու (սերմացու, մոհացու), ի (խոսք, վոտք, պետք):

Ք վերջածանցը գրաբարում հօգնակի թվի նշան եր: Մեր լեզվի մեջ կ ձայնավորով վերջացող բառերի վրա դրվում ե այդ ք ածանցն իբրև նոգուկի նշան (գյուղամշիք, անգլիացիք), բայց այդ ավելի տարածված ե բարսական լեզվում զրա գրբածությունը հնացած և Դրան հայուակի վ վերջածանցը դրվում ե արմատների վրա և ըմբռնվում զրակն յեղակի, որինակ՝ խոսք, վոտք, այք, հետք, պատմածք, զրգվածք և այլն:

Գրաբարում զրանք հօգնակի իմաստ կունենային:

§ 16. ՀԻՄՔ ՅԵՎ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բառերը խոսքի մեջ փոփոխում են իրենց վերջավորությունը և կամ փերջից փոփոխվող մասնիկներությունը, այդ փոփոխությունը կոչվում է բերում: Որինակ՝ սեղամ, անհամար, անհամարական - ներսով գրեց գի, գրեցիր, բերում:



կարդացեմ, կարդաս, կարդացի և այլն: Թիկուման տեսակներն են՝ հոլովում և խոնարհում (տես §§ 48 և 99):

Բառերի այն մասը, վար թեմուն ժամանակ (աճելով կամ առանց աճելով) անփոփոխ է մնում, կոչվում և նիմք, իսկ փոփօփակող մասը կոչվում է վերջավորություն. **որինակ՝** գրեցի, կարդացի, գրեցիր, կարդացիք բառերի մեջ գրեց, կարդաց նիմեներ են, իսկ ի և իր վերջավորություններ. Նույնը և գրեամ, գրեա, կարդաամ, կարդաաւ և այլն: Հիմքը կաղմված է լինում արմատից և ածանցից: Պարզ բառերի հիմքերը կազմված են լինում սոսկ արմատից:

§ 17. ԲԱՐԴ ԲԱՐԵՔ. ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարդ կոչվամ են այն բառերը, վարսն կազմված են լինում յերկու և ավելի բառերից և կամ արմատներից: Բարդ, ինչպես և ածանցափոր բառերը կտարող են նույնպես բարդվել կամ ածանցվել:

Բարդ սառերը լինում են՝ իսկական և անիսկան

Խական բարդ բառերի բաղադրիչ բառերը գրվում են միասին և բարենպատճենվում վարպետ մի բառ.

1. Խսկական բարդ բառերի մեջ առաջին բառը հանդիսանում է յերկու բառդի լրացում: Որինակ՝ գրատիտակ՝ գրելու և ախտակ, մրցանալիք՝ մրցության հրավեր, մարդասեր՝ մարդ սիրող, չափանամ՝ չափի հասած, յերկրաբույս՝ յերկրից բուսած, ձյունապատ՝ ձյունապատ, սնաքույս՝ սննդուսած, խավարաբնակ՝ խավարում բնակվող:

2. Բարդության յերկու բաղադրիչ մասերը միացվում են ա ձայնով, վորը կռչվում է նոդակապ. «ընակ» մարդանման, խոշորացույց, գեկավայր, միահայն և այլն:

3. Յերբ բարդվող բառերից յերկըորդն սկսվում է ձայնավորով, հոգակապ չի դրվում. որինակ՝ բնմթացալարտ, գահընկեց, հանրօգուտ, զուգընքաց:

4. Ա. մ ե ն բառով և ձայնավորով սկսվող ածականներով կազմված արդությունների ժամանակ ա հոգակապը դրվում է. որինակ՝ ամենաշղնիվ, ամենայնակար, ամենագոտակար և այլն:

5. Յերբ առաջին բառը վերջավորվում և ի ձայնավորով, վերջինիս և հոդակապի միացությունը վերածվում և ե ձայնավորի. որինակ՝ Գինի-տուն՝ զինետուն, բարի-ակամ՝ բարեկամ, շոգի-ա-քարշ՝ ողեխար և այլն:

6. Միավանկ և մի շարք բազմավանկ ի ձայնավորով վերջավորվող առառերը չեն յենթարկվում վերոհիշյալ կանոնին, այլ բարդվում են սովորական կարգով կամ կորցնում ի ձայնավորը. որինակ՝ մի ձի—միաձի, ձի շարժ—ձիաբարժ, ձի շատ—ձիաշատ, դի բավալ — դիաբավալ, հի սինչ — հիանանչ, լի ձեռն — լիաձեռն, թի վարել — թիավարել, կղզի բնակ — կղզիաբնակ, սնամի խոս — խնամախոս, վրացի խոս — վրացախոս և այլն:

7. Յերբ առաջին բառը վերջավորվում և ու ձայնավորով, վերջինս և հոդակապի հետ միասին տալիս է վա վանկը: Որինակ ձու և կեր՝ ձվացեր, կառու և խաղ՝ կատվախաղ, չու և ցուցակ՝ չվացուցակ և այլն:

8. Կան բազմաթիվ բարդություններ, վորոնք կազմված են առանց

հոգակապի. որինակ՝ նացրուս, զրվեծ, զբուղ, քարտ, բանիք, զկլի, քարկոծ, ձեռնապահ, մոմլար, մոմշոր, ծծմայր, արևմուտք, ձնծաղիկ, ձեռնապահ և այլն:

§ 18. ԱՆԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անխսկական բարդուրյուններ կոչվում են այն բարդ բառերը, վարանի շեղվում են բարդ բառերի կազմուրյան սովորական ձևերից:

Անիսկական բարդությունները ա հողակալ չունեն:

Անհսկական բարդ բառերը բաժանվում են հետեւյալ տեսակների.

1. Հարադիրներ, զորոնք թեպետ մի բառի նշանակությունը ունեն,
բայց անջատ են չըվում: Որինակ՝ բույլ տալ, ցույց տալ, սիրտ անել, օռու տալ,
մոտ գալ, պար գալ, խար տալ, լույս ընկնել, մեռնել պրծնել, բռչել գնալ,
խփել օարդել, կորել անցնել, գնալ նասնել և այլն:

ա) Հարադիր բարդ բառերը յերբեմն միանում են շաղկապով կամ կապով և յերբեմն գրփում միասին. որինակ՝ ջարդ ու փշուր, ցիր ու ցան, ահ ու գող, տուն ու տեղ, ծառ ու ճյուղ, տակն ու վրա, առ ու տուր (առուտուր), դես ու գեն, մին ու ճար (մինուճար), մի առ մի, տուն առ տուն և այլն:

բ) Հարադիր բարեգը գրվում են նաև առանց շաղկապի, այդ գեղքում բաղադրիչ մասերի մեջ հաճախ դրվում է գծիկ (•). որինակ՝ գոռում-զոչում, թև-թիկութե, զուզված-զարդարված, զիեթ-ցիեթեկ, զնալ-գալ, յեթե-չորս, հիսուն-վարսուն, կանանչ-կարմիր և այլն:

գ) Հարադիր բարդ բառերի մեջ բաղադրիչ մասերից մեկը փոխում են ձայնավորը կամ բազաձայնը, և կամ բառի վրա նոր վանկ ե ավելանում. որինակ՝ ծակ ու ծուկ, մարդ-մուրդ, մանր-մունք, փասա-փուսա, հաց-մաց, սուր-մուր, վոլոր-մոլոր, ցախ ու մախ, պարապ-սարապ, տիտլ-քավալ, առող-իսող, կաս-կարմիր, լեփ-լեզուն և այլն:

Դ) Հարադիր բարդ բառերը միևնույն բառերի կրկնություններն են լինում. որինակ՝ դառը-դառը, իջ-իջ, արագ-արագ, փունջ-փունջ, կամաց-կամաց, խումբ-խումբ, զունի-զունի, տեսակ-տեսակ և այլն:

§ 19. ԲԱՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՏ ԽԱՍՏԻ ՑԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀՆՉՈՒԻՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ

Բառերն ըստ իմաստի լինում են նույնանիւ, հականիւ, համանիւ և համանուն:

1. Նույնանիւ կոչվում են այն բառերը, վարոնք գրությամբ տարբե
են, բայց նշանակությամբ, խմասով՝ նույնը. «բինակ» այս, բոււ. Երբունի
պոռ, պոռոնկ. զնալ, յերաղ. մազ, հեր. յերես, դիմք. պատուհան, լուսամուս
անիս, ակ. բազգեկ, կուռ. վաճառող, ծախսել. վախ, յերկյուղ և այլն:

2. Համանիւ կոչվում են այն բառերը, վարոնք նշանակութամբ խիստ մոտիկ են, բայց նույնը չեն և նուրբ տարերություն ունեն. որինակ՝ հիանալ, սփանչանալ, ժիմել, կտրուցել. վերջ, վախճան. մացնել, մուծել. բարձր, վասմ. մուր, խալար. ձի, յերիվար, նժույզ և այլն:

3. Համանուն կոչվում են այն բառերը, վարոնք գրաւրյամբ նույնն են, բայց նշանակութամբ տարեր. Արինակ՝ այր (մարդ), ար (քարայր), փող (դրամ), փող (խողովակ), սեր (կաթի սեր), սեր (զգացմունք), հոս (բույր), հոս (վոչխարի հոս) և այլն:

4. Համանիւ կոչվում են այն բառերը, վարոնք գրաւրյամբ նման չեն և խմասով ել միմյանց հակադիր են. որինակ՝ հաստ, բարակ, կարմեծ, փոքր. սև, սպիտակ. լույս, խալար և այլն:

§ 20. ՆՈՐՍԴՈՒՅՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Բարդության մի տեսակն են նորագույն հապավումները: Պըստարական հեղափոխությունից հետո բարդության այդ տեսակը խիստարածվեց հատկապես այն պատճառով, վոր դրանով տնտեսվում եր ժամանակը, և գրելիս խնայվում տեղը:

Այդ բարդությունները կազմվում են հետեւյալ յեղանակներով.

1. Առաջին բառի կամ բառերի սկզբնավանկով և վերջին ամբողջ բառով. որինակ՝ լուսքածին — լուսալորության բաժին. Պետուակերական ոպերա. Պետքաղվարչություն — Պետական քաղաքական վարչություն և այլն:

2. Բառերի սկզբնավաներով. որինակ՝ Փողկոմիուրի — Ժողովրդական կոմիսարների խորհուրդ. Լուսժողկոմ — Լուսալորության ժողովրդական կոմիսար. Կենացործկոմ — Կենացրոնական Գործադիր կոմիտե և այլն:

3. Բառերի սկզբնատուերով. որինակ՝ բուհ — բարձրագույն ուսումնական հիմնարկ. ԳԱԱ — Գիտական Աշխատավորների Սեկցիա. ՀԱՄԽ — Հայաստանի Արհեստական Միությունների Խորհուրդ. ՀՀԿՑԽ — Հայաստանի Հենակենյան Կոմունիստական Յերիտասարդական Միություն և այլն:

ՏՈՂԱԴԱՐՁ

Տողադարձ անելու համար բառը բաժանվում է վանկերի, ապա վանկերից մեկը կամ միքանիսը թողնվում և տռաջին առղի վերջում, իսկ մյուսները փոխադրվում են հաջորդ տողը: Միավանկ բառերը տողադարձ չեն արվում: Տողադարձի գիծը կոչվում է յենքամ և ա:

Տողադարձի ժամանակ՝

1. Մեկ բաղաձայնն անցնում է հաջորդ վանկին. որինակ՝ Կարապետ, լավանալ, սարածել:

2. Յերկու բաղաձայներից մեկը նախորդի հետ է մնում, մյուսն անցնում է հաջորդին: Որինակ՝ հաս-նել, կար-դալ, բեռ-նել, գան-գատ-վել:

3. Յերեք բաղաձայներից յերկուսը մնում են նախորդ վանկին, մեկն անցնում է հաջորդին: Որինակ՝ ար-նա-նալ, զարկ-վել, աս-դեր, յերկ-րա-յին:

Բարդ և նախածանցակոր բառերը տողադարձ անելիս սխալ չի լինի, յեթե բարդության յերկրորդ բաղադրիչ մտսը տեղափոխվի հաջորդ տողն ամբողջությամբ. որինակ՝ հանր-ոգում, զուգ-ընթաց, զամ-ընկեր, հան-սկապե, հան-սթափեր գեղա-սքանչ և այլն:

4. Զայնավորների արանքում յ-ն վանկ և կազմում, իսկ բաղաձայնից հետո՝ վոչ Որինակ՝ գո-յա-կան, նա-յե-ցո-զու-թյուն, ըն-սկե-րություն, աղ-բյուր:

5. Բառամիջում չգրվող, բայց լսվող ը ձայնավոր գրվում է քե՛ մնացող և քե՛ մյուս տղին անցնող վանկում (տես § 23). որինակ՝ գը-լուխ, փախս-տական, Մը-կըրտիչ և այլն:

§ 21. ԲԱՐԴ ԱԾԱՆՑԱԿՈՐ ԲԱՐԵՐ

Կան նաև այնպիսի բառեր, վարոնք լինելով բարդ՝ միաժամանակ և ածանցալոր են, ունեն նախածանց, կամ վերջածանց: Այդպիսի բառերը կոչվում են բարդ ածանցավոր. որինակ՝ կուս-ա-կց-ուրյուն, գր-ա-վարժ-ուրյուն, բազմ-ա-պատկ-ուրյուն, ան-մարդ-ա-բնակ և այլն:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 22. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Գրական հայերենում ձայնավորները խիստ պարզ են, ուստի ուղղագրական տեսակետից առանձին դժվարություններ չունեն: ա, ու, ի, ո, և ձայնավորների գրությունը և արտասանությունը կատարելապես համապատասխան են միմյանց: Ուղղագրական դժվարություններ ունի ը ձայնավորը:

§ 23. Ը ԶԱՅՆԱՎՈՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառասկզբում և բառավերջում ը ձայնավորը գրվում է, յերբ արտասանվում է. որինակ՝ ընկեր, ընդունել, ընտրել, ընծա և ալլն. զիրքը, Լուսիկը, բակը, Գրիգորը, Դպրոցը և այլն:

1. Բառասկզբում սկ, սպ, ստ, սի, սր, տկ, տպ, տս, զբ, զգ, զգ կապակցություններից առաջ թեև արտասանվում է մի թույլ ը, բայց չի գրվում: Որինակ՝ սկսել, սիկզը, սպիտակ, ստեղծել, սբանչանալ, սրափիվել, սպարել, տապել, զբսնել, զգալ և այլն:

Հաս նախդիրը կազմում և բացառություն:

2. Բառավերջի ը ձայնավորը փոխվում է ն բաղաձայնի, յերբ հաջորդ բառն սկսվում և ձայնավորով և կամ սկ, սպ, ստ, սի, սի, տկ, տպ, զբ, զգ կապակցություններով:

Այս կանոնը, սակայն, ավելի բարեհնչյունության արժեք ունի, քան ուղղագրական:

Որինակ՝ աշակերտը կարդում է, կոլտնտեսությունը ցանում է, կոլտնտեսականը կարդում է, պիտոները քայլում է, բայց՝ աշկերտն ասում է, պիտորեն անցնում է, կոլտնտեսությունն ավարտում է ցանքով, կոլտնտեսականն աշխատում է: Նույն ե և բանվորը զեկավարում է մեքենան, աշակերտը մտնում է դասարան, բայց՝ բանվորն զբունում է, աշակերտն ապասում և ուսուցչին և այլն:

3. Բառամիջում սովորաբար ը ձայնավորը չի գրվում, թեև լսվում է: Որինակ՝ Մկրտիչ, պայտում, բաղր, ծանր, զլուխ:

Նախածանցավոր և բարդ բառերի մեջ ը ձայնավորը գրվում է, յեթե ածանցվող բառը և կամ բարդվող բառերից վերջինն սկսվում են ը ձայնավորով: Որինակ՝ ընթաց, նախընթաց, ընդունել, անընդունել, ընկեր, դասընկեր, ընտիր հատընտիր, բատ, որըստորեն, ընդ, խոչընդոտ, ընթացք, զուգընթաց և այլն:

4. Տողադաձի ժամանակ թե՛ մնացող վանկերից վերջինի, և թե՛ մյուս

տողն անցնող վանկերից առաջինի մեջ արտասանվող ը ձայնավորը գրվում է:

Որինակ՝ Մը-կըրտիչ, Մկըրտ տիչ, կոլտընտեսական, ծանըր, խորհըրդային և այլն:

Յեթե հաջորդ տողն անցնողն ամբողջական բառ է, ը չի գրվում: Որինակ՝ ւահա-խնդիր հաստագլուխ և այլն:

§ 24. ՅԵՐԿՀՆՉՈՒՅՑՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայերենի լերկինչյուններն են այ, ոյ, ույ և յա, յո, յու, յե: Այ և ոյ յերկհնչյունները գրվում են այնպես, ինչպես լսվում են և բարձրավուխությունների ժամանակ վոչ մի փոփոխություն չեն կրում: Որինակ՝ հայց, հայցական, կայձ, կայծեր, խոյ, խոյեցի և այլն:

Յու և յու յերկհնչյուններն ուղղագրական դժվարություններ չունեն: յե յերկհնչյունն ե, վոր ուղղագրական կանոններ ունի:

1. Յե գրվում է բառակզբում բոլոր այն գեղքերում, յերբ լսվում է: Որինակ՝ յերկու, յերեք, Յերեան և այլն:

2. Բարդության կամ ածանցման ժամանակ, յերբ յերկբորդ բառն ունի յե, իսկ նախորդ բառը բաղաձայնով և վերջավորվում, գրվում է ե: Որինակ՝ յերեք, տասներեք, յեզը անեզը և այլն:

3. Յերբ նախորդ բառը վերջանում և ձայնավորով, հաջորդ եմ, ես, ենի, եմ, են և եր (միավանկ)բայաձեերն ստանում են յ: Որինակ՝ դալու յեմ, կարելի յե, դա յե, գնալու յեր և այլն:

Ույ յերկհնչյուննը բառաբանականների ածանցվելու և բարդվելու ժամանակ վերածվում է պարզ ու ձայնավորի: Որինակ՝ ծուլը, ծուլանալ, թուլը, թուլակազմ, բուլը, բուրավետ, ստույզ, ստուկում, ստուլպատես և այլն:

Իս յերկհնչյունը շփոթվում է յա յերկհնչյունի հետ:

1. Հայերեն կամ հայացված բառերի արմատների մեջ իս կապակցությունը գրվում է միայն հեքիաթ, դաստիարակ, Մարիամ և կրիս բառերի մեջ:

2. Իս գրվում է ձի, թի, լի, նի, մի, դի, բառաբանականների և ացի կամ ի վերջավորություն ունեցող բառերի բարդության և ածանցման ժամանակ: Որինակ՝ ձիավոր, թիակ, լիառատ, նիանաւ, միակ, գյուղացիական, վորդիական, արդիական և այլն:

3. Իս գրվում է յերկոպական լեզուներից փոխառնված բառերում: Որինակ՝ պրոլետարիատ, սոցիալիզմ, մատերիալ, սոոցիացիա, Անգլիա, Գերմանիա, քիմիա, և այլն:

Այլ գեղքերում հայերեն բառերի մեջ լս կամ իս լսիլիս գրվում է յա. Որինակ՝ սենյակ, մատյան, պաշտոնյա, վոսկիյա, փայտյա և այլն:

§ 25. Յ ԶԱՅՆԱԿԱՂԲ

1. Բոլոր հայերեն բառերում, յերբ կից ձայնավորների մեջ լսվում է յիա, իե, իո, իու, յերկհնչյունավորներից բացի), գրվում է յ Որինակ՝ կայլարան, հայեցողություն, կային, կայուն, հայոց, ելակ, ելին, ելություն, գոյական, խոյեցի, կոյուղի և այլն:

2. Իա, իե, իու, իս, յերկայնավորների մեջ և չի գըվում: Որինակ՝ միակ, տիեզերք, լիություն, աղխղորմ և այլն:

3. Եա, ես, ոա, ոս, ուու յերկայնավորները, վորոնք արտասանվում են առանց և կը ուժյան մեջ չ չեն ունենում, պատահում են յեվրոպական բառերում: Որինակ՝ իդեալ, ֆեադալիզմ, բռա, կակառ, կլուսն և այլն:

§ 26. ԲԱՂԱԶԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում բաղաձայներից միքանիսն արտասանվում են դրությունից տարբեր այսպիս, որինակ՝ դ տառը մի շարք դեպքերում արտասանվում է իս, նույնպես դ տառը՝ թ, գ տառը՝ է, ձ տառը՝ ց, զ տառը՝ չ:

§ 27. Դ, և ԲԱՂԱԶԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դ տառը ձայնավորից տուած արտասանվում է դ, բաղաձայներից առաջ, բացի դ, ր, մ և ն բաղաձայներից, արտասանվում է իս: Որինակ՝ կեդա, յեղայր, թուղթ, աղքատ:

Դ, ր, մ և ն բաղաձայներից տուած դայն արտասանվում է դ. որինակ՝ ուղել, մեղր, մեղմ, կաղնի և այլն:

1. Բաղաձայներից ասած իս տառը գրվում է հետեւալ անհնչյունափոխ բառամասներում: ախտ (ժավ, ճիվանդություն), ապուխտ, բախտ, դրախտ, զմրուխտ, յերախտիք, ժխտել պանդոխտ, տախտակ, լախտ, ուխտ, վախճան, սխտոր, նաշխուն, թուխտ, խրոխտ, և դուխտ վերջավորված հատուկ անուններում (Հայկանդուխտ):

2. Խ տառը կարող է բաղաձայներից տուած ընկնել յերբ իս բաղաձայներով վերջավորվող բառը բարդվում է կամ ածանցվում և յերբ հնչյունափոխության ժամանակ իս տառի և բաղաձայնի միջև յեղած ձայնավորը դուրս է ընկնում: Որինակ՝ վախ, վախկոս, խախուս, անխախս, խախտել, վախսական:

Մնացած բոլոր դեպքերում, յերբ բաղաձայնից տուած լսվում է իս, պետք ե գրել դ: Որինակ՝ թուղթ, աղբյուր, ուղտ, մաղթել հաղթել վողբ, վողչ, շեղչ, չղջիկ, գաղտնի, խեղդել, աղքատ, գեղձ, ըղձալ, ջրահեղձ, մղձագանջ, քաղցր, դեղչել և այլն:

§ 28. Բ, Փ ԲԱՂԱԶԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բ բաղաձայնը փոխում է իր հնչումը ր, դ, մ, բաղաձայներից հետո և ա, ե, ի ձայնավորներից հետո:

1. Ծ բաղաձայնից հետո փ արտասանվող արփի, յերփն, փրփուր և տարփանք բառերում գրվում է փ: մնացած բոլոր դեպքերում անհնչյունափոխ բառարմատների մեջ բաղաձայնից հետո լսվող փ-ն պետք ե գրել թ: Որինակ՝ հարբել, սրբել, վորբ և այլն:

2. Ձայնավորներից հետո բ բաղաձայնն արտասանվում է փ միայն իբրև, շաբաթ, գուլք, խաբել, (խաբերա, խաբուսիկ) բառերում:

3. Մ բաղաձայնից հետո բ բաղաձայնն արտասանվում է վարչակի փ միայն Համբարձում, համբույր և համբերել բառերում: մնացած դեպքերում փ լսվելիս դրվում է փ:

4. Ղ բաղաձայնից հետո բ բաղաձայնն արտասանվում է փ միայն աղբ և վողբ բառերում, իսկ, աղբյուր յեղբայր և կուղբ բառերի մեջ արտասանվում է պ:

5. Հղիանալ և փողփողել բառերում լսվում է փ, գրվում է փ:

§ 29. Դ, Թ ԲԱՂԱԶԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դ ձայնեղ բաղաձայնը ձայնավորներից, ռ և ն բաղաձայնից հետո արտասանվում է թ:

1. Ձայնավորից հետո հետեւալ դեպքերում բ արտասանելիս գրվում է դ-ող, դաղար, թաղես, վառող:

3. Ծ բաղաձայնից հետո բ արտասանվող հետեւալ անհնչյունափոխ բառարմատներում գրվում է թ: արբուն, (զարբուն), թարբել, թերբ, խորբ, կիրբ, հարբ, հերբ, հորբ, մերբ, մորբ, յերբ, շողբարբ, շորբել, շուրբ, պարբե, սաղարբ, վորբ (վազ), քերբել քրամնջալ զվարբ, խրին, լուրբ, փարբամ:

Մնացած դեպքերում բ բաղաձայնից հետո բ արտասանվելիս գրվում է պ: Որինակ՝ վարդ, մարդ, զարդ, լարդ (զարման), վորդ և այլն:

4. Ն բաղաձայնից հետո դ բաղաձայնն արտասանվում է թ անդամ, ինդիր բառերում և ընդ նախածանցով կազմված բարդությունների մեջ: Որինակ՝ ընդունել ընդորինակել ընդհատել ընդհանուր և այլն:

§ 30. Վ ԲԱՂԱԶԱՅՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ ձայնեղը ձայնավորից, յերկնչյունից, ռ բաղաձայնից հետո արտասանվում է մեծ մասամբ թ:

1. Ծ բաղաձայնից հետո թ արտասանվելիս գրվում է թ արմատական և արմատ գիտուից վող հետեւալ բառերում: արբա, կիրե, հերբել, ներբուստ, քուրե, քրեթել թուրե, սարե:

2. Մնացած բոլոր դեպքերում յեթե արմատը հնչյունափոխության չի յենթարկված և չի ածանցված, ռ բաղաձայնից հետո թ արտասանվելիս պետք ե գրել թ: Որինակ՝ կարգ, թարգման, Սարգիս, պարգև և այլն:

3. Ն բաղաձայնից հետո թ լսվում է պ գրվում անգամ բառի մեջ:

§ 31. Զ, Ց ԲԱՂԱԶԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զ հայնեղը թ, դ բաղաձայններից հետո արտասանվում է ց:

1. Ու, ուժիք, բառերի մեջ միայն ձայնավորներից հետո գրվում է ձ, արտասանվում՝ ց: այլ դեպքերում ց լսվելիս դրվում է ց:

2. Ռ բաղաձայնից հետո լսվում է ց և գրվում ց միայն արցունք, հարց, աղաթարց և պախուրց բառարմատներում: բոլոր անհնչյունափոխ բառարմատներում ց լսվելիս գրվում է ձ: Որինակ՝ վարձ, արձակ, բարձր, դարձ և այլն:

3. Պ. բաղաձայնից հետո ց լսվում ե և ց գրվում միայն քաղց, քաղցը
և քաղցկեղ բառերում և նբանց բարդությունների մեջ:

4. Մյուս բոլոր անհնչյունափոխ բառարմատներում դ բաղաձայնից
հետո ց լսվելիս պետք ե զբել ձ: Որինակ՝ դաղձ, մաղձ, հեղձ, իղձ, գեղձ,
գուղձ և այլն:

§ 32. Զ, Զ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զ ձայնեղը ձայնավորներից, բ և դ բաղաձայններից հետո հաճախ ար-
տասանվում ե չ:

1. Ծ բաղաձայնից հետո յեթե հնչյունափոխություն տեղի չի ունեցել,
չ լսվելիս գրվում ե չ միայն դարձին և չարչի բառերում, մնացած դեպքե-
րում չ լսվելիս գրվում ե զ: Որինակ՝ վերջ, թրջել, շրջել, արջ, վորջ և այլն:

2. Դ բաղաձայնից հետո չ լսվելիս գրվում ե չ միայն դեղչել բառի
մեջ, մնացած բոլոր անհնչյունափոխ բառարմատներում չ լսվելիս պետք ե
դրել զ: Որինակ՝ վորջ, չդջիկ, զդջալ և այլն:

§ 33. Ո ՑԵՎ Ծ ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Առաջնալեզվային բաղաձայններից և ն ոնդային բառերից առաջ
բ արտասահնվում ե ո:

1. Ռ գրվում ե անհնչյունափոխ բառարմատներում ն բաղաձայնից
առաջ. որինակ՝ դառնալ, բառնալ, մեռնել, խառնել և այլն:

2. Ո գրվում ե բաղաձայնից առաջ հետեւյալ բառերում. ուռկան, ուռ-
ճանալ, հոռոթի, խոպոտ, առվույտ, կռոչել, կռթնել, կռվան, մատովակ
բառերում:

Մյուս դեպքերում, յերբ բաղաձայնից առաջ լսվում ե ո, պետք ե գրել
բ. որինակ՝ արծաթ, արծիվ, արտ, մարդ, լյարդ և այլն:

3. Ծ բաղաձայնը կարող ե լինել ն բաղաձայնից առաջ այն դեպքե-
րում, յերբ բառարմատների հնչյունափոխության հետեւանքով դրանց միջի
ձայնավորը դուրս ե ընկնում և կամ բ վերջավորվող բառը ածանցվում
կամ բարդվում ե: Որինակ՝ դարուն, դարնանային, արյուն, արնաթաթակ
և այլն:

4. Ո բաղաձայնը կարող ե ընկնել մի ուրիշ բաղաձայնից առաջ այն
դեպքում, յերբ բառարմատի հնչյունափոխության հետեւանքով դրանց միջի
ձայնավորը դուրս ե ընկնում, բ կամ ո վերջավորվող բառը ածանցվում
կամ բարդվում ե: Որինակ՝ առիթ, առթիվ, կռիվ, կռվարար, փառ(ք),
առ(ք), ապառիկ, պառկել և այլն:

5. Ո վերջավորվող արմատի կրկնությամբ կազմված բարդ բառերի
մեջ առաջին ո բաղաձայնը վերածվում ե բ բաղաձայնի: Որինակ՝ բարբար,
թրթիռ, մրմուռ, սարսուռ և այլն:

6. Նմանաձայնությամբ կազմված բառերը գրվում են ո բաղաձայնով
Որինակ՝ մումուալ, նոնուալ, գոռգուալ, դոդուալ և այլն:

§ 34. Ս ԲԱՂԱՁԱՅՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բ, պ, փ շրթնային տառերից առաջ բառարմատներում միշտ գրվում ե
մ, թեև լսվում ե ն: Որինակ՝ ալբար, ամզ, կաղամբ, ամփոփ և այլն:

Բ, պ, փ շրթնայիններից առաջ ն բաղաձայնը կհանդիպի միայն ան-
նախածանցով կաղմամբ բառերի մեջ: Որինակ՝ անբախտ, ան-
պետք և այլն:

§ 35. Ո ՏԱՐ ԲԱՂԱՅՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ոտարազգի և ոռւսերեն բառերը, վորոնք սկսվում են բ բաղաձայ-
նով, հայերենում գրվում են ո բաղաձայնով: Որինակ՝ ռեակցիա, ռեալ-
ռումանտիզմ, ռուս, ռուբլի:

2. Բառամիջում ն ե լ բաղաձայններից առաջ գրվում ե ո բաղաձայնը,
մյուս գեղագիրում՝ բ: Որինակ՝ Բեռլին, Ժուլյալ, բայց՝ Ցելցուպա, Վարշավա
և այլն:

3. Բառամիջում և վերջում կրկնակի բաղաձայնը հաճախ գրվում ե ո:
Որինակ՝ Մառ, Տեռու և այլն:

4. Կրկնակի բաղաձայններ ունեցող բառերը հայերեն պետք ե գրել մի
տառով, բացի այն դեպքերից, յերբ վորոշակի արտասահնվում ե, որինակ՝
կալեկտիվ, կոմունա, պրոֆեսոր, պրոցես, պրոգրես, բայց՝ մասսա, կասսա,
Շիլեր, գոլլար, գամմա և այլն:

Ծատ հին ժամանակներում ուրիշ լեզուներից փոխ առնված ե մեր լեզվի մեջ
մերված մի շարք բառեր պահպանում են կրկնատառ գրությունը. որինակ՝ Աննա,
Հովհաննես և այլն Յերբ դրանք գործածվում են կրճատված ձևով, գրվում են
մեկ նոր. որինակ՝ Անիկ, Ռնիկ և այլն:

5. Բառի վերջում կրկնակի բաղաձայն չի գրվում:

6. Կա կապակցությունը պետք ե գրել միշտ նա: Որինակ՝ եխսկուրսիա,
եխսպեղիցիա, եխսանսիվ և այլն:

7. Կրկնակի ո ձայնավորը գրվում ե ո: Որինակ՝ կոռպերատիվ, Մոռը
և այլն:

8. ա և ն ձայնավորներից հետո գրվում ե լ, յեթե հաջորդում ե ձայ-
նավոր. Որինակ՝ պոլեկիա, պրոյեկտ, Տրոյա, այերողըրում, այերողըրան և այլն:

ԽՐԱՔԻ ՄԱՍԵՐ

§ 36. ՀՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բառերն ըստ իրենց ընդհանուր իմաստների կարելի յէ բաժանել առանձին խմբերի, վորոնք կոչվում են խոսքի մասեր:

Ասացինք արդեն՝ խոսքը կառուցվում են նախաղասություններից, իսկ նախաղասությունները՝ բառերից: Ուստի բառերը նախաղասության, ապա և խոսքի ժինանյութերն են:

Բառերը բաժանվում են զանազան տեսակների, ուստի բառերն ըստ իրենց իմաստի բաժանվում են խմբերի:

Մի խումբ բառեր ցույց են տալիս տուարկաներ, մի այլ խումբ՝ հառկություններ, մի յերրորդ խումբ՝ թիվ և այլն:

Բառերը և նրանց այդ խմբերը կոչվում են խոսքի մասեր:

Հայերենում ինը խոսքի մաս կա:

1) Գոյական անուն, 2) Ածական անուն, 3) Թվական անուն, 4) Դերանուն, 5) Բայ, 6) Մակրայ, 7) Կապ, 8) Շադկապ, 9) Զայնարկություն:

Գոյական, ածական, բվական, դերանուն, բայ և մակրայ կոչվում են բանձրացական իմաստ ունեցող խոսքի մասեր և նախաղասության մեջ գառնում են անդամներ, իսկ կապը և շադկապը կոչվում են ձևական իմաստ ունեցող խոսքի մասեր և նախաղասության մեջ ինքնուրույն կերպով անդամ լինել չեն կարող, նրանք նախորդ խոսքի մասերի հետ միասին են կազմում նախաղասության անդամներ: Զայնարկությունները միունքում են նախաղասությունից գուրս, բայց հանդիսանում են առանձին խոսքի մաս, քանի վոր մասնակցում են խոսքի կառուցման մեջ:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

ՀՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Գոյական անուն են կոչվում բոլոր առարկա նշանակող բառերը: Առաջի ասելով պիտի հասկանալ՝ իրեր (ծառ, փայտ, գիրք, յերկաթ, կաթսա), կենդանիներ (ճարդ, թռչուն, աշակերտ, գայլ, ողախի, մըջուն), յերևույթներ (կայծակ, փոթորիկ, հրձանք, վողկորություն), անցեր (հեղափոխություն, պատերազմ, գործադուլ), հարաբերություններ (սեր, բարեկամություն, միություն, թշնամություն, շահագործում) և այլն — մի խոսքով իրավին առարկաներ և առարկայացվող հասկացուրյուններ, զաղափարներ:

1. Առարկաները լինում են կոնկրետ և վերացական, կոնկրետ են բոլոր իրային արտահայտություն, բովանդակություն ունեցող առարկաները (ծառ, աշակերտ, գայլ, լուսին), վերացակայացվող հասկացությունները (փերսոփայություն, տարրունակություն, յեղբակացություն, հաճույք, ըմբռնում, գաղափար): Կերպացականներն ունեն իրական արտահայտություն (զիտություն, գաղափար, արագություն), կարող են (հազվագյուտ զեպքերում) նաև չունենալ իրական արտահայտություն, այլ լինելով բարեկանում (սատանա, դե, վոգի, աստված, հրեշտակ, քաջը):

2. Գոյական անուններն ըստ ներականական ձևի և իմաստի լինում են հասունի և հասարակի:

Հասունի կոչվում են այն գոյական անունը, վորը նշանակում ե մի վորոշ առարկա առանձին վերցրած, տրված ե մի առարկայի՝ իր սեսակին պատկանող առարկաներից զատկու համար, որինակ՝ Նիներ, Նազիկ, Արշավիր, Աղասի, Հրազդան, Արագած, Յերևան, Սևան, Անդրկովկաս, Աղբքեցան, Անգլիա և այլն:

Հասունի անուններ են բոլոր մարդկանց, քաղաքների, գյուղերի, գետերի, լճերի, յերկրների, հիմնարկների, կազմակերպությունների, գործարանների, կոլլեգների անունները, նաև կենդանիներին (ընտանի) տրված անունները:

Հատուկ չեն այն առարկաների անունները, վորոնք մի հատ են, յեղակի յեն. որինակ՝ արև, լուսին:

Բոլոր հատուկ անունները գրված են մեծատաերով. որինակ՝ Խանջյան, Աղասի, Ստալին, Քուռ, Անդրկովկաս, Արագած, Խորհրդային Միություն:

Հասարակ և կոչվում այն գոյական անունը, վորը արվում ե միենույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին:

Որինակ՝ սեղան, միստ, մատիտ, ծոռ, բարդի, վարունի, առւն, աշակերտ:

ծանոթ.—Հավաքական անուն են կոչվում միատեսակ առարկաների խմբերի անունները: Որինակ՝ յերամ, գյուղացիություն, բանվորություն, ժողովորդ ե այլն:

Հավաքական անունները քերականական են չունեն, լմբունվում են և գործածվում վորպես հասարակ անուն:

3. Նախադասության մեջ գոյական անունները լինում են թե յենթակա, թե ստորոգյալ և թե լրացում:

Որինակ. աւակերը զնաց դպրոց (այս նախադասության մեջ աւակերտ գոյական անունը յենթակա յէ):

Կիմիկն աւակերտ ե (այս նախադասության մեջ աւակերտ գոյական անունը ստորոգյալ ե):

Ուսուցիչը գովում ե իր հառաջադիմ աւակերտին (այս նախադասության մեջ աւակերտ գոյական անունը լրացում ե):

4. Նախադասության մեջ լրացում դառնալու համար գոյական անունն ստանում ե վերջավորություններ: Այս վերջավորությունները ցույց են տալիս գոյական անվան պաշտոնը նախադասության մեջ, այն իմաստը, վորով ավյալ գոյական անունը կապվում ե նախադասության մյուս անդամների հետ, ամբողջացնում, լրացնում և նախադասությամբ արտահայտվող միտք:

Որինակ՝ ուսուցիչը զնանատում ե զանասեր աւակերտ նախադասության մեջ միտքը չի լրանաւմ, մինչդեռ ուսուցիչը զնանատում ե զանասեր աւակերտ ի ն նախադասության մեջ միտքն ամբողջացած ե: Այս նախադասության մեջ ին վերջավորությունը ցույց տվեց, վոր տակերտ գոյականն արտահայտում ե այն առարկան, վորին վերաբերում ե ուսուցչի գնահատելու գործողությունը, այսինքն աւակերտին բառը լրացնում և ստորոգյալը:

Մեկ ուրիշ որինակ՝ Կիմիկը նեռացավ Արամ ի ց նախադասության մեջ ի ց վերջավորությունը ցույց ե տալիս, վոր Կիմիկի կատարած գործողությունն սկսվում ե Արամի մոտից:

Յեթե ից վերջավորությունը կցենք Կիմիկի գոյականին, կստացվի Կիմիկ ի ց նեռացավ Արամը; այսինքն՝ Արամի գործողությունն ե սկսվում Կիմիկի մոտից:

5. Այսպիսով՝ նախադասության մեջ գոյականներն ստանում են դաշտան վերջավորություններ, վարոնցով վրոշվում ե, թե ավյալ գոյական անունը նախադասության մեջ ի՞նչ դեր ունի, ի՞նչ ձեռվ և լրացնում, ամբողջացնում նախադասության արտահայտօծ միտքը:

Վորոշիկերում գոյական անունը թեև չի ստանում վերջավորություն, քայլ տեղով, կերառությամբ արտահայտում ե իր պաշտոնը:

§ 37. ՀՈՂՈՎՈՒՄ

Գոյական անվան վերջավորության փոփոխությունը, վարով արտահայտվում է գոյականի կատարած պատճենը նախադասության մեջ, լրացնում նախադասության միտքը, կոչվում ե հոլովում:

Նախադասության մեջ գոյական անվան գործածության յուրաքանչյուր սարքեր ձևը կոչվում ե հոլով:

Հայերենում գոյական անուններն ունեն յոթը հոլով. ուղղական, սրական, հայցական, բացառական, գործիքական:

§ 38. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈՂՈՎ

1. Ուղղական հոլովը ցույց ե տալիս նախադասության յենթական, գործող կամ լինող անձը. Որինակ՝ բանվորն աշխատում ե գարծարանում: Կոլտսեսականը հավաքում ե բերքը: Աւակերը սովորում ե դասը: Փողոցով անցալ մի պիտիերական վաս:

Այս նախադասությունների մեջ բանվորն, կոլտսեսականը, աւակերը, վաս բառերը յենթականներ են և դրված են ուղղական հոլովով:

2. Ուղղական հոլովը ցույց են դրվում նաև բաղադրյալ սուրոցյալի (յերկու բառից կազմված) առարկա կամ անձ արտահայտող մասը: Որինակ՝ Գևորգը պիտիեր ե: Այսու Սեղիկը ներքապան ե, Ընկեր Ստալինը համաշխարհին պրոետարիատի առաջնորդն ե:

Այս նախադասությունների մեջ պիտիեր ե, ներքապան ե, առաջնորդ ե, բաղադրյալ ստորոգյալ են, վորոնց պիտիեր, ներքապան և առաջնորդ բառերը գոյականներ են և դրված են ուղղական հոլովով:

3. Ուղղական ուղղական դրվում նաև գոյականները, վորոնք բացահայտում են յենթական կամ նախադասության մեկ ուրիշ անդամ, ինչպիսին են, որինակ՝ տեսակի, պաշտոնի, պարապմունքի և այլն անունները: Որինակ՝ մեր դպրոցի աւակերտումի Լևսիկը լավ ե նկարում: Մեր ուսուցիչ Հարուրյանը հաղաքից նեռացել ե: Ընկեր Մոլոտովը ԽՍՀՄ-ի Ժողկոմիարքի նախագահ ե:

Այս նախադասությունների մեջ աւակերտումի բառը բացահայտում է Լուսիկը յենթական, ուսուցիչ բառը՝ Հարուրյանը յենթական, բնիեր բառը՝ Մոլոտովը յենթական և դրված են ուղղական հոլովով:

4. Ուղղական հոլովով են դրվում խոսքից գուրս անվանվող առարկաների անունները: Որինակ՝ սեղան, ծառ, գետ, մարդ, գայլ, աւակերտ և այլն:

Ուղղական հոլովով են դրվում նաև կոչական բառերը (անունները): Ուղղական հոլովով պատասխանում ե հավաքական մուտքածությունը:

§ 39. ՍԵՐԱԿԱՆ ՀՈՂՈՎ

1. Սերականը ցույց ե տալիս այն առարկան, վորին վերջաբերում, հատկացվում, պատկանում ե ուրիշ առարկա կամ առարկաներ:

Որինակ՝ դպրոցի աւակերտը դաս ե սովորում: Կոմկուսակցության անդամը դեկանը ընկեր ե: Թեսիկի գրչածայրը կուրտվեց:

Այդ նախադասությունների մեջ դպրոցի բառաձեւը ցույց ե տալիս, վոր աշակերտը հատկացվում ե դպրոցին, կոմկուսակցության բառաձեւը ցույց ե տալիս, վոր անդամը կոմկուսակցությանն ե, իսկ Թեսիկի բառաձեւը ցույց ե տալիս, վոր գրչածայրը պատկանում ե Գետիկին: Դպրոցի, կոմկուսակցության և Թեսիկի բառերը դրված են սերական հոլովով:

Սերական հոլովը պատասխանում ե համար հարցերին:

Սերական հոլովը լինում ե գոյականի կամ գոյականաբար գործածվող բառի լրացումը:

§ 40. ՏՐԱԿԱՆ ՀՈՂՈՎ

1. Տրական հոլովը ցույց ե տալիս առարկան, վորին հանգում ե յենթակայի գործածվությունը, այսինքն՝ այն անձը կամ իրը, վորին գիտում, մոտենում,

արվում, կամ վորի ոգտին կամ վասին կատարվում ու լինում ե գործողությունը: Որինակ՝ մասնաւ սեղանին: Սեղին իր գրիչը սից Պետիկին:

Սեղանին և Պետիկին գոյականները արված են ՏՐԱԿԱՅԻ հոլովով:

2. ՏՐԱԿԱՅԻ ցույց ե տալիս նաև գործողության նպատակը. որինակ՝ լեիկը զնաց գրադարան գրի (գիրք բերելու):

3. ՏՐԱԿԱՅԻ ցույց ե տալիս նաև տեղ ու ժամանակ՝ որինակ՝ առընդունակ ամսին ծաղկում են ծառերը: Նա կնուախ տանը:

ՏՐԱԿԱՅԻ հոլովը պատասխանում է մւմ և ինչի (ն) հարցերին: Տրականը լինում է ստորոշյալի լրացում:

§ 41. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. ՀԱՅՑԱԿԱՅԻ հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորն անմիշապես իր վրա կրում է յենթակայի գործողությունը:

Սոնիկը կոտրեց իր գրիչը: Պրովետարիատը ջախջախեց բուրժուազիային: Բանվաները գերակատարեցին պլանը: Առողջ կանչեց Սոնիկին:

Գրիչը, բարեխուազիային, պլանը, Սոնիկին բառերը արված են հայցակայի ան հոլովով:

2. ՀԱՅՑԱԿԱՅԻ հոլովը ցույց ե տալիս նաև գործողության տեղ, ժամանակ՝ չափ. որինակ՝ հայրա զնաց Յերևան: Մեր աշխատանքը տեսք մի ամիս: Ենիկուրանները հինգ կիլոմետր հեռացան խաղաքից:

Յերևան, մի ամիս և նինգ կիլոմետր բառաձևերը նույնպես արված են հայցակայի հոլովով:

ՀԱՅՑԱԿԱՅԻ հոլովը պատասխանում է մւմ և ինչ (ը) հարցերին:

ՀԱՅՑԱԿԱՅԻ հոլովով դրված բառը նախադասության մեջ լինում է լրացում:

§ 42. ԲԱՅՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. ԲԱՅՑԱՌԱԿԱՅԻ հոլովը ցույց ե տալիս յենթակայի գործողության յելակետը կամ սկզբանակետը, մեկնակետը, այսինքն այն առարկան (իր, տեղ, ժամանակ), վորից սկսվում կամ առաջանում է յենթակայի գործողությունն ու յեղելությունը: Որինակ՝ զնացից մեկնեց յերեկոյան: Թորից մի կորուց պատուից: Արամը Առողից նամակ սացավ:

Յերևանից, բրից, Առողից բառաձևերը դրված են բացառակայի հոլովով:

ԲԱՅՑԱՌԱԿԱՅԻ հոլովը պատասխանում է մւմից և ինչից հարցերին: Նախադասության մեջ լրացում է լինում:

§ 43. ԳՈՐԾԻՍԿԱՆ ՀՈԼՈՎ

1. ԳՈՐԾԻԿԱՅԻ հոլովը ցույց ե տալիս այն առարկան (միջոցն ու գործիքը), վորով կատարվում է գործողությունը կամ այն առարկան (վայր, տեղ), վորի միջոցով կամ ընթացքով կատարվում է յենթակայի գործողությունը կամ յեղելությունը:

Որինակ՝ մատիտը գրում է: Փաղոցով անցնում էմ: Հարվածային առակերտությանում և ուսուցիչը:

Մատիտը, փողոցով և առակերտության բառաձևերը գործի առկան հոլովով են: Գործի առկան հոլովը պատասխանում է ումո՞վ և ինչո՞վ հարցերին, նախադասության մեջ լինում է լրացում:

§ 44. ՆԵՐԳՈՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

ՆԵՐԳՈՅՑԱԿԱՅԻ հոլովը ցույց ե տալիս այն առարկան, վորի մեջ կատարվում է գործողությունը. որինակ՝ դասարանում պարապում են աշակերտները: Դասում աշխատում է արակտորը: Լեռներում ծաղիկներ կան: Դասարանում, դասում և լեռներում բառաձևերը ներգոյակայի հոլովով են:

ՆԵՐԳՈՅՑԱԿԱՅԻ հոլովը պատասխանում է ո՞ւմ մեջ և ինչի մեջ հարցերին, նախադասության մեջ լինում է լրացում:

§ 45. ԳՈՅՑԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

ԳՈՅՑԱԿԱՆ անուններն ունեն նաև յերկու թիվ՝ յեզակի և հոգնակի:

1. ՅԵԶԱԿԻ թիվը ունի գոյականի այն ձեզ, վորը ցույց ե տալիս մինչույն տեսակի առարկաներից մի հատ: Որինակ՝ պատ, վոտ, մատ, փողոց, քաղաք, կաղմակերպություն և այլն:

2. ՅՈԳՆԱԿԻ թիվը ունի գոյականի այն ձեզ, վորը ցույց ե տալիս մինչեւույն տեսակի մեկից ավելի կամ շատ առարկաներ: Որինակ՝ պատեր, վատներ, մատներ, փողոցներ, քաղաքներ, կաղմակերպություններ և այլն:

ՅԵԶԱԿԻ բառը կաղմակած ե յեզ բառից, վոր նշանակում է մնակ, հոգնակի բառը կաղմակած ե հոգն բառից, վոր նշանակում է շատ: Այս յերկու բառերն ել հարցած են 8-րդ գարում, գործ են ածվել գրաբարում և նույնությամբ անցել են աշխատաբարի մեջ:

§ 46. ԳՈՅՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԸ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԳՈՅՑԱԿԱՆ անունների յեզակի թվին ավելացնելով եր կամ ներ վերջակորությունը, ստացվում է հոգնակի թիվ: Միավանկ գոյականներին առնելացնելում է եր, իսկ բաղմավանկ գոյականներին՝ ներ: Որինակ. միավանկ՝ պատ—պատեր, գիրք—գրքեր, թե—թեեր, տուն—տներ. բաղմավանկ՝ կուկերիկիւներ, պիոներ—պիոններներ, աշակերտ—աշակերտներ և այլն:

2. Յեթի բաղմավանկ բառն ունին վերջավորություն, հոգնակի թվում ստանում է մի ն ևս և գրվում է յերկու ն-ով: Որինակ՝ կոմյերիտական — կոմյերիտականներ և այլն:

3. Մի շաբաթ գոյական անուններ ստանաւմ են հոգնակի սուղականում տարբեր վերջավորություններ: Որինակ՝ մարդ—մարդիկ, կին—կանայք: Հոգնակի կաղմելու այս ձեզը գրաբարից են անցել մեր լեզվի մեջ:

4. Բարդ բաղմավանկ բառերը հոգնակի թվում ստանում են եր վերջավորություն, յերբ բաղմավորության վերջին մասը միավանկ գոյական անուն և և բարդության ժամանակ պահում է իր բուն իմաստը. որինակ՝ ծրագիր—ծրագրեր, լրագիր—լրագրեր, դասագիրք—դասագրքեր, մորագույր—մորագույրեր, քարտաֆայուր—քարտաֆայուրեր և այլն:

Յերբ, սակայն, յերկրորդ բաղմավորից բուն իմաստը կորչում է և բարդ

բառը նոր իմաստ ստանում, այդ դեպքում վորակս բազմավանկ բառ ստանում և ներ վերջավորություն: Որինակ՝ մարդակեր — մարդակերներ, մարդակը — մարդակներներ, ժամացույց — ժամացույցներ:

5. Մի շաբք միավանկ բառեր հոգնակիում ստանում են ներ վերջավորություն, փոխարեն եր ստանում: Դրանք են, վոտ—վոտներ, մատ—մատներ, յեղ—յեղներ, բեռ—բեռներ, լեռ—լեռներ, դուռ—դուռներ, ձեռ—ձեռներ, ձուկ—ձկներ, թոռ—թոռներ, հարս—հարսներ, գառ—գառներ, մուկ—մկներ և այլն:

Այս գոյականները գրաբարում ունեցել են և վերջավորություն հենց յեղակի թվում, վոտն, մատն, յեղն, բեռն, լյառն, դուռն, ձեռն, ձուկն, թոռն, հարսն, գառն, մուկն և այլն: Աշխարհաբար յեղակի թվում և ընկնում և, հոգնակի թվում վերականգնվում, վորից և ստացվում և ներ վերջավորությունը:

Մի շաբք միավանկ բառեր, թեև գրաբարում ունեն արմատական Ն, բայց աշխարհաբարի հոգնակի թվում չեն վերականգնում այդ հնչյունը. որինակ՝ մատն—մատնը, սերն—սերմնը, անձն—անձնը և այլն:

6. Գրաբարում գոյական անունները հոգնակի թվում ստանում են և վերջավորություն: Մեր լեզվի մեջ ևս մի շաբք գեղքերում գոյական ներն ունենում են և վերջավորությամբ հոգնակի: Որինակ՝ զյուղացին, անդ լիացին, գովկացին, քաղաքացին և այլն:

Այս ձևերը, սակայն, քիչ գործածական են և գրանց փոխարեն հաճախ գործ են ածվում՝ զյուղացիներ, անգլիացիներ, կովկասցիներ և այլն:

7. Ք ածանց ունեցող մի շաբք գոյականներ, որինակ՝ խոսք, վայք, միտք, պետք, տուրք և այլն, մեր լեզվում գործ են ածվում վորպես յեղակի. գրաբարում դրանք հոգնակի յին, քանի վոր և ածանցը գրաբարում հոգնակի կազմող վերջավորություն և: Մեր լեզվում հիշած բառերի հոգնակին կլինի՝ խոսիեր, վասիեր, միտքեր, պետքեր, տուրքեր և այլն: Այսպիսով այս գոյականներն ունեն կրկնակի հոգնակի՝ և (գրաբարյան) և եր կամ ներ (աշխարհաբարյան):

8. Հատուկ գոյական անունները հոգնակի թվով գործածվելիս նույնական գրվում են մեծատառով: Որինակ՝ Արամներ, Սարոներ, Զատոներ, Հակոբներ (բանի, բանի՝ Շահումյաններ ընկան մեր պայմանում):

§ 47. ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԱԽՄՆԵՐԸ ԽՈՍՔԻ ՄԵՋ

1. Գոյական անունները խոսքի մեջ տարբերվում են յերկու հիմնական խմբով՝ անձեր և սովորական առարկաներ կամ իրեր: Անձեր նշանակող գոյականները մեծապույն մասով մարդ նշանակող հասուկ և հասարակ անուններ են, որինակ՝ գործավար, բանակային, նրամանատար, առաջնորդ, վարչապետ, ուսուցիչ, աշակերտ, պիտիներ, կոլվար, նախագահ, կայսերական, Պետքի, Շուշիի կիման և այլն:

2. Նախադասության մեջ մի շաբք հոլովներում անձ և առարկա նշանակող գոյականները տարբեր վերջավորություն են ստանում: Որինակ՝ յիս տեսօտքով (սովորական առարկա), բայց՝ յիս տեսօտքով (անձ):

3. Գոյականների այս յերկու խմբերից յուրաքանչյուրը նախադասության մեջ գործ և ածվում անօրոշ և փորացյալ առումով: Որինակ՝ կողմարը մոտեցավ մի աշակերտի (աշակերտի՝ անորոշ առում և, հայտնի չե, թե վոր աշակերտի մասին ե խոսքը):

Վորվարը մոտեցավ մեր գպրոցի հարվածային աշակերտին (աշակերտը հայտնի չե, վորոշ ե):

§ 48. ՀՈԼՈՎՈՒԽՄՆԵՐ

Բոլոր գոյականները միատեսակ չեն հոլովվում: Սեռական հոլովում հանդիսան են գալիս հոլովման տարբերություններն ու այնուհետև պահպան վում կամ նույնանում միայն հետո: Որինակ՝ սեղանի, քրոջ, աշնան, գինու և սեղանից, քրոջից, աշնանից, գինուց և այլն:

Սեռական հոլովի վերջավորությունները, վորոնցով վորոշվում ե հովալման տեսակը, կոչվում են նոլովիչներ: Հայերնն ունի ութք նոլովում, ուրեմն և ութք նոլովիչներ՝ ի, ու, ան, յան, ոչ, ոք, վա, ց:

§ 49. Ի ՀՈԼՈՎՈՒԽՄ

1. Այս հոլովման պատկանող գոյական անունները սեռական հոլովում ունենում են և վերջավորություն: Ի հոլովման են պատկանում գոյական անունների մեծ մասը:

Աղյուսակ N 4

Թիվ	Հոլով	Ի ր	Ա. ն ո ր ո ւ շ	Վ ո ր ո շ յ ա լ	Ա. ն ո ր ո ւ	Վ ո ր ո շ յ ա լ
1.	Ու.	պատ	պատը	աշակերտ	աշակերտը	
2.	Ա.	պատի	պատի	աշակերտի	աշակերտի	
3.	Տ.	պատի	պատին	աշակերտին	աշակերտին	
4.	Հ.	պատ	պատը	աշակերտ	աշակերտին (նաև աշակերտի)	
5.	Բ.	պատից	պատից (ը)	աշակերտից	աշակերտից (ը)	
6.	Գ.	պատով	պատով (ը)	աշակերտով	աշակերտով (ը)	
7.	Ն.	պատում կամ	պատում կամ	աշակերտի մեջ	աշակերտի մեջ	աշակերտիմեջ(ը)
		պատի մեջ	պատի մեջ			
8.	Ու.	պատեր	պատերը	աշակերտներ	աշակերտները	
9.	Ա.	պատերի	պատերի	աշակերտների	աշակերտների	
10.	Տ.	պատերին	պատերին	աշակերտների	աշակերտներին	
11.	Հ.	պատեր	պատերը	աշակերտներ	աշակերտների	
12.	Բ.	պատերից	պատերից	աշակերտներից	աշակերտներից	
13.	Գ.	պատերով	պատերով	աշակերտներով	աշակերտներով	
14.	Ն.	պատերում կամ	պատերում կամ	աշակերտների մեջ	աշակերտների մեջ	
		պատերի մեջ	պատերի մեջ			

2. Իր նշանակող գոյական անունների հոլովման ժամանակ ձևով ուղղական ու հայցականը նման են, իսկ սեռականն ու տրականն անորոշական առումներով նման են, վորոշյալ առումներով՝ տարբեր:

3. Ա. ն ձ նշանակող գոյական անունների հոլովման մեջ ձևով ուղղականն ու հայցականը, սեռականն ու տրականն անորոշ առումով նման են, իսկ վորոշյալ առումով՝ վորոշյալ առումներով նման են տրականն ու հայցականը (աշակերտին):

4. Հաճախ գոյականի սեռական հոլովմ ընդունելով նը կրկնակի հողը, դրանով փոխարինում ե լրացլող բառը Որինակ՝ Զուլիկի տեսքը վերցրեն, իսկ Առողի ն ը (Աշոտի տեսքը) թողին: Զուլիկի ձեռագիրը լավ ե, իսկ Առողի ն ը (Աշոտի ձեռագիրը) վատ ե:

Սեռականի այս ձեզ կոչվում ե փոխանուն սեռական: Փոխանուն սեռականները պատկանում են ի հոլովման և հոլովմում են միայն վորոշյալ առումով: Որինակ՝ Ուղ. Աշոտինը, Սեռ. Աշոտինին, Հայց. Աշոտին (ին), Բաց. Աշոտինից, Գործ. Աշոտինով, Ներգ. Աշոտինի մեջ:

5. Պարտեզ, հանդես, ինձ (գաղան), եւ և մի շարք այլ բառեր հոլովմիցիս կրում են հնչյունափոխություն՝ պարտիզի, հանդիսի, ընձի, իշի և այլն Այժմ, սակայն, տարածված ե մի շարք նման բառեր առանց հնչյունափոխության հոլովելու:

6. Լույս, հույս, ուղի, փուլը և մի շարք այլ բառեր գործիականում ունենում են նաև լրտով, հուսով, ուժով, փուլով ձերբը:

7. Ա. ն ձ և կ ե ն դ ա ն ի նշանակող գոյականները ներկոյականում ում վերջավորություն չեն ստանում, դրանց ներգոյականը կազմվում է սեռականով և մեջ յետադրությամբ. Որինակ՝ Արամի մեջ, ուսուցչի մեջ:

8. Բացառական, գործիական, ներկոյական հոլովմերի վորոշյալ ձերբի գործածությունը հատուկ ե բարբառային լեզվին, բայց յերբեմն գործ և ածվում նաև գրականում: Որինակ՝ պատիզը, պատովը:

§ 50. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀՈԼՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. Հյունափոխության կանոնները հոլովման ժամանակ ճշտությամբ չեն պահպանվում, փոխվում են վերջին վանկի ի, ու և ձայնավորները՝ Որինակ՝ զիրք, զրբի, զրբեր, զուր, զրի, սիրս, սրբ, մուկ, մկան, միներ:

2. Վերջին վանկում ի և ու արժատական ձայնավոր ունեցող բազմավանկ գոյականները յեզակիում փոխում են դրանք ը ձայնավորի, իսկ հաղնակիում պահպանում են անփոփոխ: Որինակ՝ հովիլ, հովիլի (օհողին տիմ հովիլի դին): Հ. Թ. «Անուշ», հովիլներ, յերկիր, յերկրի, յերկիրներ, բժիշկ, բժիշկներ և այլն:

3. Վերջին վանկում ե ունեցող մի քանի գոյականներ հոլովման ժամանակ փոխում են այդ ձայնավորներն ի ձայնավորի: Որինակ՝ Հովինանին—Հովիանիսի, հանդես—հանդիսի, պարտեզ—պարտիզի և այլն Դրաբարյան մասցրդներ են: Մեր լեզվի մեջ այժմ գործ և ածվում նաև Հովիանիսի, հանդեսի, պարտեզի և այլն:

§ 51. Ա. ն ձ ՀՈԼՈՎՄԱՆ

1. Այս հոլովման պատկանող գոյականները սեռականում ունենում են ու հոլովական վերջավորություն: Գործիականում ունենում են սովորական ով վերջավորություն:

Աղյուսակ № 5

Թիվ	Հոլովման անունը	Ի ր		Ա. ն ձ	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Ա.	մատանի	մատանին	ամուսին	ամուսինը	
Ա.	մատանու	մատանու	ամուսնու	ամուսնու	
Տ.	մատանու	մատանուն	ամուսնու	ամուսնուն	
Հ.	մատանի	մատանին	ամուսին	ամուսնուն	(նաև ամուսնու)
Բ.	մատանուց	մատանուց	ամուսնուց	ամուսնուց	
Գ.	մատանով	մատանով	ամուսնով	ամուսնով	
	կամ	կամ	կամ	կամ	
	մատանիով	մատանիով			
Ն.	մատանում	մատանում	ամուսնու մեջ	ամուսնու մեջ	
	կամ	կամ	կամ	կամ	
	մատանու մեջ	մատանու մեջ			

Թիվ	Հոլովման անունը	Ի ր		Ա. ն ձ	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Ա.	մատանիներ	մատանիները	ամուսիններ	ամուսինները	
Ա.	մատանիների	մատանիների	ամուսինների	ամուսինների	
Տ.	մատանիների	մատանիներին	ամուսիններին	ամուսիններին	
Հ.	մատանիներ	մատանիները	ամուսիններ	ամուսիններին	
Բ.	մատանիներից	մատանիներից	ամուսիններից	ամուսիններից	
Գ.	մատանիներով	մատանիներով	ամուսիններով	ամուսիններով	
Ն.	մատանիներում	մատանիներում	ամուսինների	ամուսինների	մեջ

2. Ի, ու, ան, յան, ոզ, որ, վա հոլովումներին պատկանող գոյականները հովիակի թվում ունենում են ի հոլովման վերջավորություններ:

3. Ու հովովման են պատկանում բոլոր այն գոյական անունները կում գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերին պատկանող բառերը:

վորոնք վերջավորվում են ի ձայնավորով (բացառությամբ ձի, թի, դի բառ ուրիշ), որինակ՝ այգի (այգու), վորդի (վորդու), զյուղացի (ս.—զյուղացու), ծերունի (ս.—ծերունու), ձի—ձիու և այլն:

4. Գոյականաբար գործածվող բառերը, վորոնք ունեն ելի վերջավորությունը, յենթարկվում են ի հոլովաճան: Որինակ՝ սիրելի (սիրելիի), հարգելի (հարգելիի), նազելի (նազելիի), և այլն: Հայելի և նման բառերը, ինչպես և ի վերջավորվող հայ և ոտարազդի հատուկ անունները հոլովածում են թե ի (հայելիի, Գարերալդիի) և թե ու (հայելու, Գարերալդու) հոլովածում:

5. Ու հոլովաճան պատկանող գոյականները, վորոնք ունեն ուղղականում ի վերջավորություն, սեռականում, տականում և բացառականում կորցնում են ի ձայնավորը, գործիտականում և ներգոյականում յերբեմն պահում են, յերբեմն կորցնում: Որինակ՝ այզով, այզիով, մտանելով, մտանելով, ծերունելով, ծերունելով, այզում, այզիում (համարյա անդորրածական) և այլն:

Կամ ի բառը հոլովածում են կաօր, կաօրն, կաօրց, կաօրվ կամ կաշեով ձեռվ, նաև կաօրին, կաօրից, կաօրնվ ձեռվ:

7. Մի շարք բառեր, թեև ի ձայնավորով չեն վերջավորվում, բայց պատկանում են ու հոլովաճան: Որինակ՝ ամուսին, ամկողին, դար, մարդ:

Անկաղին և դար բառերը նաև ի հոլովաճան տակ են ընկնում: Որինակ՝ դարի, ամկողին, դարից, ամկողնից և այլն:

8. Մարդ բառի հոգնակին շեղվում և ընդհանուր կանոնից, ի հոլովաճան չի յենթարկվում և գրաբարակերպ և հոլովածում: Ուդ. մարդիկ, սեռ. մարդկանց, տ. մարդկանց, հայց. մարդիկ (անորոշ առումով), մարդկանց (վորոշյալ առումով), բաց. մարդկանցից, գործ. մարդկանցով, ներգ. մարդկանցում և այլն:

Մարդ բառը հոգնակի սեղականում ունենում և իկ վերջավորությունը:

§ 52. ԱՆ ՀՈԼՈՎԱՃԱՆ

1. Ան հոլովաճանող բառերը սեղականում ունենում են ան վերջավորություն, վորն ստացվում և կամ բառարմատի ու ձայնավորը փոխվելով ա ձայնավորի և կամ պարզապես բառին ան վերջավորություն առիւանալով:

Այս հոլովաճանող բառերի խոշորագույն մասը յենթարկվում և հնչյունափոխության:

Բիրդ	Հոլովաճան	Ի ԵՐ		Ա. Ն Ճ	
		Անորոշ	Վորոշյալ	Անորոշ	Վորոշյալ
Ու.	դուռ	դուռը	թոռ	թոռ	թոռը
Ս.	դուռ	դուռն	թոռան	թոռան	թոռանը
Հ.	դուռ	դուռը	թոռ	թոռան	թոռանը
Բ.	դոնից	դոնից	թոռնից (նաև թոռից)	թոռնից	թոռնից
Չ.	դոնով	դոնով	թոռնով (նաև թոռով)	թոռնով	թոռնով
Ն.	դոնում	դոնում	թոռան մեջ	թոռան մեջ	թոռան մեջ
Հոլովաճանի	Ու.	դոներ	դոները	թոռներ	թոռները
	Ս.	դոների	դոների	թոռների	թոռների
	և այլն	և այլն	և այլն	և այլն	և այլն

2. Ան հոլովաճան են պատկանում այն գոյականների մի մասը, վորոնք գրաբարում ունեցել են արմատական և վերջավորություն և ժողովրդական լեզվի մեջ կորցրել որինակ՝ ձուկ (ն), մուկ (ն), դուռ (ն), գոռ (ն), յեղ (ն), նուռ (ն) և այլն:

Մի շարք այդպիսի գոյականներ պատկանում են ի հոլովաճան. որինակ՝ վուս (ս.—վասի), մաս (ս.—մատի), հարա (հարսի), սերմ (սերմի), մաս (մասի), կար (կաթի), ակ (ակի), անձ (անձի) և այլն:

Այս գոյականները գրաբարում յեղել են՝ վուն, մասն, հարսն, սերմն, մասն, կարն, ակն, անձն ձևով:

Ծունկ (ն), փուռ (ն), յեղ (ն) և նման այլ գոյականներ յենթարկվում են նաև ի հոլովաճան՝ ծնկի (ծնկան), փոփի (փուան), յեղի (յեղան) և այլն:

3. Այս բառերը մեծ մասամբ հոգնակիում վերականգնում են իրենց արմատական և վերջավորությունը: Որինակ՝ դոներ, բոռեր, մկներ, ձկներ, զառեր, վասեր, հարսներ, ակներ (ակնիմսեր) և այլն:

4. Միքանիսը չեն վերականգնում գրաբարյան և վերջավորությունը. որինակ՝ անձեր, մասեր, սերմեր և այլն:

Մի քանիսն ստանում են և ածանց յեղակի առումով, հոգնակին կաղմում են առանց և բաղաձայնի: Որինակ՝ վոսք, վոսեր, ձեռք, ձեռին:

5. Ան հոլովաճան են պատկանում նաև ում (գրաբարյան ումն) վերջանցավոր գոյականները. որինակ՝ զեկուցում (զեկուցման), ուսում (ուսման), կատարում (կատարման):

Ում ածանցով գոյական կաղմելը այժմ խիստ տարածված է. այս ածանցով կազմված գոյականներն արտահայտում են գործողության անուն. որինակ՝ նվազում (նվազելու գործողությունը), հաշվառում (հաշվառնելու գործողությունը), հարմարելու գործողությունը) և այլն:

Ում ածանց ունեցող գոյականները յերբեմն յենթարկվում են ի

լովման. որինակ՝ ուսում, ուսումի, ուսումք, ուսումով:
Այժմ տարածված ձեն և ան հոլովումը:

6. Ան հոլովման են պատկանում ամառ, ձմեռ, գարուն, աշուն գոյա-
կանները, վորոնք կորցնելով վերջավանկի ձայնավորը, սեռականում սուա-
նում են ան հոլովը. ամռան, ձմռան, զարնան, աշնան. Ամառ և ձմեռ բա-
ռերն ունեն նաև սեռականում ամրան, ձմրան ձեռքը, վորոնք հնացած են:

7. Եսեն և տուն գոյականների ու ձայնավորը սեռ, և ՏՐ. փոխարինվում
և ամայնավորով, բաց. և գործ. ը ձայնավորով. տուն, տան, տան (ը), տան
(ը), տնից, տնով, տան մեջ. տուն, տան, տան (ը), տուն (ը), տնից, տնով. Տուն
գոյականի ներդոյականն և տանը կամ տան մեջ:

8. Անուն գոյականը ուն վերջավանկը դարձնում և վան. ուղ. անուն,
ո. անվան, ար. անվան (ը), հ. անուն (ը), բաց. անունից, գործ. անվանք,
ներդ. անվան մեջ, Գործածական և այս գոյականի ի հոլովումը. անունի,
անունից, անունով:

9. Ման գոյականը սեռականում ստանում և վան վերջավորություն. ուղ.
ման, ո. մահիվան, ար. մահիվան (ը), հ. ման (ը), բաց. մահիվանից, գործ. մահիվա-
նով (կամ մահիվամբ), ներդ. մահիվան մեջ: Տարածված է բառիս ի հոլովումը.
ման, մանի, մանի (ն), ման (ը), մանից, մահիվ, մահիվան մեջ: Ման բառը սե-
ռականում գործածվում և նաև մահու ձեռվ (մահու չափ):

10. Մանուկ բառը յենթարկվում և ան հոլովման՝ մանկան (Մոր և Ման-
կան Պաշտպանության Ընկերություն), մանկան (ը) և այլն:

Այս բառը գործածական և նաև ի հոլովմամբ: Միմիայն ի հոլովման և
պատկանում Մանուկ հատուկ անունը, վորը նույն մանօվկ բառն և:

11. Գրաբարի մի շարք բառերի մեջ ո. բաղաձայնը և հնչյունից հե-
ռունալով կամ աղասիվելով, վերստանում և յուր նախկին բնչյունը. որի-
նակ՝ դրան, լեռն, լեռան, ձմեռն, ձմերան կամ ձմրան և այնմողովրդա-
կան լեզվի մեջ և մեր գրական լեզվում այդ որենքը գոյություն չունի: Աս-
վում և գրվում ե դրան, լեռան, ձմռան և տյլու բաղաձայնով գրելը
հնացած է:

12. Հիմ (ն) գոյականն ունի սեռ. հիման, գործիակ. հիմամբ: Հիմ բառը
գրական լեզվի մեջ գործ և ածվում հիմի ձեռվ և յենթարկվում և ի հոլով-
ման:

§ 53. ՅԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ

1. Այս հոլովման են պատկանում բոլոր այն գոյականները, վորոնք
սեռականում ունենում են յան վերջավորություն:

2. Յան հոլովման են պատկանում բոլոր ուրիշն ածանցով կազմված
գոյականները, վորոնք, յեթե կազմվում են բայերից, արտահայտում են մեծ
մասսամբ գործողության արդյունք, մնայուն հետևանք:

3. Յան հոլովման գոյականների գործիականն ունենում և յամբ և
ավ վերջավորություն, ներգոյականը ուն վերջավորություն չի ընդունում:
Այժմ արդեն ընդունված է ասել նաև նիմնարկություն, խորհնեսությու-
նում, կոլտնեսություն, թե՛ գրում են՝ նիմնարկության մեջ, խորհնեսու-
թյան մեջ, կոլտնեսության մեջ:

Հոլով	Ա. ո տ բ կ ա մ (իր)	
	Ա. ն ո բ ո ւ շ	Ա. ո բ ո ւ շ ա մ լ
Ու.	հիմնարկություն	հիմնարկությունը
Ս.	հիմնարկության	հիմնարկության
Տ.	հիմնարկության	հիմնարկությանը
Հ.	հիմնարկություն	հիմնարկությունը
Բ.	հիմնարկությունից	հիմնարկությունից
Գ.	հիմնարկությունով կամ հիմ- նարկությամբ	հիմնարկությունով կամ հիմ- նարկությամբ
Ե.	հիմնարկության մեջ	հիմնարկության մեջ
Ու.	հիմնարկություններ	հիմնարկությունները
Ս.	հիմնարկությունների	հիմնարկությունների

և ա յ լ ն

4. Յան հոլովման պատկանող մի շարք գոյականներ անհոգնական են,
այսինքն հոգնակի թիվ չունեն, ավելի ճիշտ՝ հոգնակի թվով չեն գործած-
վում. որինակ՝ բանվարարյուն, զյուղացիուրյուն, լավարյուն, չեն գործ-
ած վում բանվորություններ, գյուղացիություններ, լավություններ:

5. Յան, ձյուն, արյուն և անկյան գոյականները յենթարկվում են ի
հոլովման, բայց գործածական են նաև սեռական պյան, ձյան, արյան և ան-
կյան ձեռերը, ինչպես և գործիական ձեռվ:

6. Ծնունդ և զալաւս գոյականները պատկանում են ի հոլովման, բայց
գործածության մեջ կան նաև դրանց ծննդյան և զալաւյան սեռական հոլո-
վածները, ինչպես և զալաւյամբ գործիական ձեռվ:

§ 54. Վ.Ա. ՀՈԼՈՎՄԱՆ

1. Այս հոլովման պատկանող գոյականները, վորոնք ժամանակ են
ցույց տալիս, սեռականում ունենում են վա վերջավորություն, վոր ավել-
յանում և ուղղականի վրա: Բացառականի, յերեմն և գործիականի վերջա-
վորությունները զրվում են արտականի վրա: Վա հոլովման պատկանող անձ
նշանակող գորականներ չկան:

2. Որ գոյականը գործածվում և նաև ի հոլովմամբ, (հասանք լավ որի,
որը որին), ունի նաև որ ավուր ձեռվ:

Այսուր գոյականը յենթարկվում և վա հոլովման:

3. Ժամ, օաբար, ամիս, կեսուր, զիւեկ, ցերեկ և անգամ գոյ-
ականները յենթարկվում են վա հոլովման, բայց գործիականի ով վերջա-
վորությունն ավելանում և վոչ թե տականի, այլ ուղղականի վրա, սեռ.

Թիվ	Հոլովակ	Ա. ն ո ր ո ւ շ	Վ. ո ր ո ւ շ ա լ
Շ.	որ	որը	
Ա.	որվա	որվա	
Տ.	որվա	որվան	
Հ.	որ	որը	
Բ.	որվանից	որվանից	
Գ.	որվանով	որվանով	
Ն.	որում, որվա մեջ որվա մեջ, որում		
Հոլովակի	Ու.	որեր	որերը
Հոլովակի	Ա.	որերի	որերի

և այլն

ժամվա, շաբարվա, ամսվա, կեսորվա, զիշերվա, ցերեկվա, անգամվա: Տր—ժամվա (ն), շաբարվա (ն), ամսվա (ն), կեսորվա (ն), զիշերվա (ն), ցերեկվա (ն), անգամվա (ն): Հայ յ. ուղղականի նման ե: Բացառական ճամփանից, շաբարվանից, ամսվանից, կեսորվանից, զիշերվանից, ցերեկվանից, անգամվանից: Գործ. ժամով, շաբարով, ամսով, կեսորով, զիշերով, ցերեկով, անգամով, ներգ. ժամում, շաբարում և այլն:

Այս գոյականները գործածական են նուև ի հոլովմամբ. որինակ՝ ժամի հինգին, ամսի 16-ին և այլն:

Ամիս բառը գործածվում է նաև ամսույս ձևով (ամսույս 26-ին, այսինքն այս ամսի 16-ին):

4. Տարի գոյականը յենթարկվում է վա հոլովման, ունի նաև տարու, տարուց, տարուի, տարում ձևերը:

5. Առավոտ և այժմ գոյականների սեռ. ունի նաև տուալույսն և այժմյան ձևերը (առավույսն պահին), գործածական են նաև ի հոլովմամբ. Գործածական է նաև այժմյանից ձևը:

6. Վա հոլովման պատկանող բառերը՝ տարի, առավոտ, ամառ, ձմեռ, հիմա (հիմբկվա), յերեկ, վաղը, եզրու, այժմ, նետո (յետվա), յերկուսբրի և շաբաթվա մյուս որերի անունները, գործիականը կտղմում են վանով վերջավորությամբ:

7. Առունեն, առունելու, գարունելու ձևերը բարբառային են և գործածական չեն ժամանակակից գրական հայերենում:

§ 55. ՈՉ ՀՈԼՈՎՈՒՄ

Այս հոլովման պատկանող գոյականների սեռականն ունենում է ոչ վերջավորություն, վոր ավելանում է ուղղականի վրա: Ոչ հոլովման գոյականների մեջ իր (սոսկական տուարկա) նշանակող գոյականներ չեն, բոլորն ել անձ են ցույց տալիս:

Թիվ	Հոլովակ	Անուրոշ	Վորոշալ
Շ.	քույլը	քույլը	
Ա.	քրոջ	քրոջ	
Տ.	քրոջը	քրոջը	
Հ.	քույլը	քույլը	
Բ.	քրոջից	քրոջից	
Գ.	քրոջով	քրոջով	
Ն.	քրոջ մեջ	քրոջ մեջ	

և այլն

2. Ոչ հոլովմանն են պատկանում կին, տիկին, բույր, սկեսուր, աներտալ, բնիկեր և եեր գոյականներն ու դրանցից բարդվածները (մորաքույլը, մուռաքույլը):

3. Աներ, տալ, սկեսուր, բնիկեր և տանուեր գոյականները գործածվում են նաև ի հոլովմամբ (աների, տալի, սկեսուրի, ընկերի):

4. Կին գոյականի հոգնակին մեր գրական լեզվի որենքներին համապատասխան չե և կաղամաւը և գրաբարականն ձեերով: Ուղ. կանայք, սկեսանանց, տը. կանանց, հայց, կանայք և կանոնց, բաց. կանանցից, գործ. կանոնցով, ներգ. կանանց մեջ: Քիչ գործածական են տիկինայք, տիկնանց և այլ ձեերը:

§ 56. ՈՐ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Այս հոլովման պատկանող գոյականներն ունեն այլ վերջնավանկը, վորը սեռականում փոխվում է որ: Այս հոլովման գոյականներից իր նշանակողներ չեն, բոլորն ել անձ են ցույց տալիս:

Աղյուսակ № 10

Թիվ	Հոլովակ	Անուրոշ	Վորոշալ
Շ.	հայր	հայրը	
Ա.	հոր	հոր	
Տ.	հոր	հոր	
Հ.	հայր	հայրը	
Բ.	հորից	հորից	
Գ.	հորով	հորով	
Ն.	հոր մեջ	հոր մեջ	

§ 58. ԱՅԼԱԶԵՎ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Հիշատակած հոլովումներից և վոչ մեկին չեն պատկանում աղջիկ և այլ բայականները, վորոնք ունեն հոլովման հետեւյալ պատկերը.

Աղյուսակ № 12

Թիվ	Հոլով	Անորոշ	Վորոշալ
Հոլով	Ու.	հարեր	հայրեր
Հոլով	Ու.	հայրերի	հայրերի
	և ա յ լ ն		

2. Որ հոլովման պատկանող բառերն են հայր, մայր, յեղայլ չու յականները և դբանցով բարդվածները (հօրեղբայր, նախահայր, նախամայր և այլն):

3. Բարբառային են կեսոր (կեսուր), անոր (աներ), տեղոր (տեղը) և նման ձևերը:

§ 57. Յ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Այս հոլովման են պատկանում այն գոյականները, վորոնք ուղղականում ունեն է և սեռակ. զ վերջավորություն և հավաքական իմաստով ստացական գոյական անուններ են: Այդ գոյականներից իր նշանակողներ չկան, բոլորը նշանակում են անձ:

Աղյուսակ № 11

Թիվ	Հոլով	Վորոշալ	Վորոշալ
Ու.	Գրիգորենք	մերոնք	
Ու.	Գրիգորենց	մերոնց	
Տ.	Գրիգորենց	մերոնց	
Հ.	Գրիգորենց	մերոնց	
Բ.	Գրիգորենցից	մերոնցից	
Գ.	Գրիգորենցով	մերոնցով	
Ն.	Գրիգորենցմեջ	մերոնցմեջ	

2. Յ հոլովման գոյականները յեղակի չունեն և կոչվում են անեղական:

3. Յ հոլովման գոյականները վերջավորում են մեծ մասամբ անի, ենի ածանցներով:

4. Գրաբարում գործածվող յանի ածանցը սեռականում ունի յանց ձեւ, վորը և գործ եր ածվում վորպիս ազգանունների վերջավորություն:

5. Այժմյան ազգանունների յան վերջավորությունը (Խանջյան, Ներսիսյան և այլն) ուղղական հոլովածե ե, վորը գործածված ե նաև գրաբարում (Մամիկոնյան):

Թիվ	Հոլով	Ի բ		Ա ն ձ	
		Անորոշ	Վորոշալ	Անորոշ	Վորոշալ
Ու.	սեր	սերը	աղջիկ	աղջիկը	
Ու.	սիրո	սիրո	աղջկա	աղջկան	
Տ.	սիրո	սիրուն	աղջկա	աղջկան	
Հ.	սեր	սերը	աղջիկ	աղջկան	
Բ.	սիրուց	սիրուց	աղջկանից	աղջկանից	
Գ.	սիրով	սիրով	աղջկանով	աղջկանով	
Ն.	սիրոմեջ	սիրոմեջ	աղջկա մեջ	աղջկա մեջ	
Հոլով	Ու.	չունի		աղջիկներ	աղջիկներ
Հոլով	Ու.			աղջիկների	աղջիկների
	և ա յ լ ն				

§ 59. ՀԱՐԱԴԻՔԻ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

1. Հարադիք գոյական անունների հոլովման ժամանակ փոփոխվում ե յիքիբորդ հարադրվող բառը: Որինակ՝

Ու. նիստ ու կաց (ը)

Ու. նիստ ու կացի

Տ. նիստ ու կացի (ն)

Հ. նիստ ու կաց (ը)

Բ. նիստ ու կացից

Գ. նիստ ու կացով

Ն. նիստ ու կացում

2. Միքանի դեպքերում հարադիքներից առաջինը հոլովվում ե մինչե տքականը: Որինակ՝ մայր ու աղջիկ, մար ու աղջկանից և այլն:

§ 60. ԳՐԱԲԱՐ ՀՈԼՈՎԱԶԵՎԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

Գրաբարյան հոլովաձերից մի շաբաթ մնացորդներ կան մեր լեզվի մեջ, վոր այժմ չեն ըմբռնվում վորպիս հոլովածեն: Գրանք գործ են ածվում իբ բի ածանց կամ իբրև վոր և կամ իբրև խոսքի մասեր (մակբայ, կապ):

1. Ք ածանցը, վոր գրաբարում հոգնակի նշանակություն տվող վերաշավորությունն են, մեր լիզում դրվում են ի ձայնավորով վերջավորվող բառների վրա և գործածվում վորպես հոգնակի կաղմող յերկրորդական ձև, վոր շատ տարածված չէ: Որինակի գերամացիք, յերևանցիք:

Այդպիսի բառերը գործ են ածվում ավելի շատ ենք վերջավորությամբ:

2. Ք. վերջավորություն ունեն ց հորովման բառերը և ձևերը:

3. Սկանա լիճ, վանա ծով և նման ձևերը գրաբարյան սեռականներն են, վոր գործածվում են միայն միքանի դեպքերում:

4. Աց, ից, ոց վերջավորությունները գրաբարյան հոգնակի սեռականի վերջավորություններ են, մեզ մոտ գործ են ածվում աղղերի, ժողովուրդների և անդերի անունների սեռականի տեղ: Որինակ՝ Պարսից ծոց, ուսւաց լեզու, Կասպից ծով, նախոց լեզու և այլն:

5. Գրաբարյան բացառական և գործիական հոլովածերը մեզ մոտ գիտակցվում են վորպես մտկրայ կամ կտավ, որինակ՝ ի սրբ, իմարկե, անձամբ, մասամբ և այլն:

§ 61. ՀՈԴԵՐ

Գոյականների, դերանունների և գոյականաբար գործածվող բառերի վորոշյալ առումներն ունենում են հոդ: Հոդերը լինում են ցուցական, ստացական, դիմորոշ և վարողող:

1. Ցուցական հոդ: Ա, Դ հոդերը զբվելով բառի վրա, այս և այդ ցուցական վերանվան են փոխարինում: Որինակ՝ Աշուար Պետիկին բան եր պատմում, վերջին ուշադիր լսում եր նրան: Վերջին ձեզ կարելի յե փոխարինել այս վերջինը կազմակցությամբ: Քաղաքդ, Յերևանը, վերակառուցվում ե:

2. Ստացական հոդեր: Ա, Դ հոդերն ունեն ստացական նշանակություն, փոխարինում են իմ, ու դերանուններին: Որինակ՝ գիրքի բաց արա, գիրքս ընկավ, գրքերս կորան, գրքերդ վերցրու:

Գիրքս, գիրքի ձեռները կարելի յե փոխարինել իմ գիրքը, ու գիրքը, իմ գրքերը, քո գրքերը:

Մեր, ձեր հոգնակի ստացական (պատկանելիություն) իմաստ արտահայտելու համար հոդերը դրվում են ենք վերջավորության վրա: Որինակ՝ գրքներս հավաքենք, զբքներդ փակեցեք: Գրքներս և գրքներդ ձեռները կարելի յե փոխարինել մեր գիրքը կամ մեր գրքները, ձեր գիրքը կամ ձեր գրքները ձեր վերով:

3. Դիմորոշ հոդեր: Ա և Դ հոդերը զբվելով բառի վրա, վորոշում են առարկայի դեմքը: Որինակ՝ վո՞ր մեկս պատասխանի: Վար մեկդ կուզի:

4. Վորոշող հոդն ել կամ ն: Ը կամ ն զնելով բառի վրա, արտահայտում են նրա վորոշ, հայտնի լինելու իմաստը: Այս վերքը քոնն եւ Այդ բարտին բարձրահասակ ե:

Բաղաձայնով վերջավորվող բառերն սահանում են ը հոդը, իսկ ձայնավորով ն հոդը: Որինակ՝ մատիտը, թուղթը, բայց՝ կատուն, դինին և այլն:

Յերբ նախագասության մեջ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով կամ սպ, սկ, սր, զգ, զբ, ըս, սփ յերկաղաձայնով, վորոնցից առաջարտասանվում

մը, նախորդ բառի ը վորոշով հոդը փոխարինվում ե ն հոդով: Որինակ՝ դիրքն ընկալ: Սոնիկն ասաց: Պետիկն սահացավ: Աշակերտն զրոնում եու:

5. Այս վերջին կանոնն ավելի շուտ բարեհնցունության խնդիր ե, յան ուղղագրության: Արժմ կարելի յե յերբեմն ը հոդը չփոխարինել ն հոդով, հատկապես յերբ խոսքի մեջ բառերը դանդաղ են հաջորդում միմյանց:

§ 62. ԳՈՅԱԿԱՆԱՑՆՈՒԹՅԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

Մի շարք ածանցներ զբվելով բառարմատների և կամ հիմքերի վրա, առաջացնում են ցոյական անուններ: Դրանք են:

Ա.կ (փոքրացուցիչ փաղաքշական և նվաստական նշանակությամբ)—առվակ, գետակ, գոյակ, կոտորակ, խմբակ, վիզակ, իմաստակ, զրչակ և այլն: —(Գործող անձ, գործիք և այլ գոյականների նշանակությամբ) հյակ, բուժակ, աղղակ, վրիպակ, պահակ, որինակ, ախորժակ, ձաշակ, սահնակ, տեսակ և այլն:

Ա.ն—վիպասան, ճարտասան, խթան, իշխան, ծորան, կռան, պլան, փական և այլն:

Ա.ն Բ—գովաստան, վերավորան, դրկանի, գգվանի, զարմանի, բամբառանի, նախարարանի, աշխատանի, պատրանի, տականի, ծփանի, հալածանի և այլն:

Ա.ն Ա կ—ճոճանակ, մրցանակ, ցուցանակ, հաղթանակ և այլն:

Ա.ր Բ—լուծարք, գործարք:

Ա Ա Տ—Պահեստ, ուտեստ, գովեստ:

Ա Ա Տ—գալուստ, թաքուստ, փախուստ, հաղուստ և այլն:

Ի Բ—ուտեիլիք, վառելիք, հրաշալիք, զիսելիք, հագնելիք և այլն:

Ի Հ—յերգիչ, նկարիչ, վարիչ, ուսուցիչ և այլն:

Մ ո ւ ն Ի—ուսմունք, արարմունք, ցուցմունք, բաժանմունք, հուղմունք պարապմունք և այլն:

Յ ա կ—յոթնյակ, տասնյակ, յեռամյակ, յեռամյակ, հիսնամյակ, յեռյակ և այլն:

Յ ո ւ ն—հնչյուն, գոչյուն, զողանջյուն, խոխոջյուն, մռնչյուն, դղրդյուն, դոփյուն և այլն:

Ո ր դ—առաջնորդ, գնորդ, պակասորդ, սավառնորդ, հետեւորդ, ձանապարհորդ, փոխանորդ, անցորդ և այլն:

Ո ւ ւ—վաշնառու, արյունարբու, վողբերդու, կատակերգու, վերտրու և այլն:

Ո ւ յ ո ւ ն—ընկերություն, հնուրյուն, նշանակություն, շինարարություն, իմացություն, ընթերցանություն, հարմարություն, հայտնություն, կառավարություն, իշխանություն, միուրյուն և այլն:

Ո ւ ն ի (իգական սեռի անձի գոյական անուններ)՝ բանվորունիք, բանաստեղծունիք, գերասանունիք, աշակերտունիք, ընկերունիք, ուսուցչունիք, հայունիք, հրեյսունիք, գեղեցկունիք և այլն:

Ա.վ Ո ր—պատգամավար, աշխատավոր:

Ո ւ մ (գործողության անուն նշանակությամբ)՝ կառուցում, ղեկուցում, զարգացում, մերձեցում, հուզում, շարժում և այլն:

Ույը—բնույթ, ձանձրույթ, հումուր, սովորույթ, հավաքույթ և այլն:
Ույժ—հաճույք, պիտույք, կանույք և այլն:
Ունիք—մանրունիք, համեմունիք, իրավունիք, սկզբունիք և այլն:
Պան—պահապան, ձիապան, դնապան, այգեպան, պարտիզպան և այլն:
Վածք—պատմվածք, ճեղքվածք, բացվածք և այլն:
Վոր—բանվոր, քոչվոր և այլն:
Պան, արան—ձուլարան, նստարան, ննջարան, կացարան, դաստարան,
թեյարան, հաշարան և այլն:

Ք (գրաբարյան հոգնակի վերջավորություն, վոր միք լեզվի մեջ զիշտակցվում է իրբեկ գոյականացնող ածանց յեզակի թվով)՝ միտք, բերք, հումք, խելք, կյանք, որենք և այլն:

ԱՇԱԿԱՆ ԱՆՈՒՆ

§ 63. ԱՇԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ածական տնօւն են կրչվում այն բայոր բառեր, վորոնիք ընդհանուր առումով ցույց են տալիս առարկայի ինչպիսի կամ ինչից լինելը, այսինքն հատկությունը, հատկուրյան ծագումը և վերաբերությունը. որինակ՝ կարմիր, բարակ, լավ, գեղեցիկ, փայտյա, առակեցական:

Ածականները լինում են յերկու տեսակ՝ վորակական և հարաբերական կամ հատկանի գեղեցիկ, ավելի գեղեցիկ, ամենագեղեցիկ և այլն:

§ 64. ՎՈՐԱԿԱԿԱՆ ԱՇԱԿԱՆՆԵՐ

Վորակական կոչվում են այն ածականներ, վորոնիք ցույց են տալիս առարկայի նաևկուրյունը, ինչպիսի լինելը. որինակ՝ գեղեցիկ, լավ, բարձր:

Վորակական ածականներն ունեն նաև եմատուրյան ասիմետրիա և ասիմետրիա: Համեմատուրյան ասիմետրիա բացահայտում են ածականի ցույց տված հատկության աստիճանը. որինակ՝ լավ, ավելի լավ, լավագույն կամ ամենալավ, գեղեցիկ, ավելի գեղեցիկ, ամենագեղեցիկ և այլն:

1. Յերբ ածականները ցույց են տալիս առարկայի հատկություն՝ տառնց համեմատելով մի այլ առարկայի նույն հատկության հետ, նրանք ունեն գրական աստիճան: Այսպիս են պարզագույն ձևով գործածվող ածականները. որինակ՝ լավ, վաս, հաս, բարակ, հաջող, անհաջող, ուրախ, խելու և շնորհալի և այլն:

2. Յերբ ածականները ցույց են տալիս առարկայի հատկությունը՝ համեմատելով մեկ ուրիշ առարկայի նույն հատկության հետ, նրանք ունեն նաև մատական: Համեմատական աստիճանը կազմվում է գրականից, վրան ավելացնելով հետեւյալ բառերը՝ ավելի, ավելաս, նվազ, նույնական, նույնափառ, այնպիս, այնքան, այնչափ: Որինակ՝ ավելի լավ, նույնական, նույնափառ բարակ և այլն:

3. Յերբ ածականները ցույց են տալիս առարկայի հատկությունը, վորը համեմատելի չե մյուս առարկաների նույն հատկության հետ, այլ գերազանց եւ կամ ընդհակառակն, նրանք ունեն գերազանց աստիճանը կազմվում է յերեք կերպ:

ա) Դրական աստիճանի վրա ավելացվում ե ամենա նախածանցը կամ առաջադիրը. որինակ՝ մեծ, ամենամեծ, լավ, ամենալավ, պետքական, ամենապետքական, գեղեցիկ, ամենագեղեցիկ և այլն: Հակառակ հայերենի բառակազ-

մութեան որինքի՝ ամենա առաջադրի վերջին ձայնավորը չի սղվում այն դեպքում, յերբ ածականն սկսվում է ձայնավորով. որինակ՝ անպետք, ամենաանպետք, առաջին, ամենատառաշին, ոգտավիտ, ամենաոգտավիտ, իսկական, ամենափական և այլն:

Ա. մ է ն ամենացը գրվում է ածականի հետ միշտ միասին:
բ) Գրական աստիճանի վրա ավելացվում է ազույն վերջածանցը. որինակ՝ լավ, լավագույն, գեղեցիկ, գեղեցկագույն, հզոր, հզորագույն, մեծ, մեծագույն, բարձր, բարձրագույն և այլն:

գ) Դրական աստիճանի հետ գործ է ածվում շատ, խիստ, սաստիկ, հույժ, աջափ, կատարելապես, քիչ, անհատ և այլ բառեր. որինակ՝ մեծ, շատ մեծ, խիստ մեծ, անշափ մեծ և այլն:

Այս վերջին ձեր կոչվում է նաև սաստիկան:

§ 65. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՄ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Հասկան հարաբերական կոչվում էն այն ածականներ, վարոն ցույց են տալիս հատկության (հատկանիքի) վերաբերությունը, առարկայի ու ապահանելը, առարկայի ինչից լինելը, ծագումը. որինակ՝ փայտյա սեղան, առակերտական գիրք, յերկարյա պահարան, պիոներական տուն:

Հատկական ածականները համեմատության աստիճաններ չունեն:

§ 66. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅՑԱԿԱՆԻ ՀԵՅ

Ածականները գոյականների հետ գործածվելիս չեն հոլովվում, մնում են անփոփոխ. որինակ՝

Յեզակի	Հոգնակի
Ու. մեծ տետրակ	մեծ տետրակներ
Ս. մեծ տետրակի	և այլն
Տ. մեծ տետրակի	
Չ. մեծ տետրակ	
Բ. մեծ տետրակից	
Գ. մեծ տետրակոյ	
Ն. մեծ տետրակում	

§ 67. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՅՑԱԿԱՆԻ ՅԵԿ ԸՆԴՀԱԿԱԲԱԿԻ

1. Ածականները գործ են ածվում գոյականաբար, ինչպես և գոյականներն ածականաբար. որինակ՝ աղբա (ած.) մարդ, բայց անկախաբար նաև աղբա (գոյական), կենդանի (ածակ.) եյակ, բայց և՝ կենդանի (գոյական), սուր (ածակ.) դանակ, բայց և՝ սուր (գոյական), բազ (ածակ.) մարդ, բայց և՝ բազ (գոյական) և այլն: նույնը և գոյականները. տոն (գոյական), նաև տոն (գոյական) նաև աղբա (ածական) որ, ապառաժ (գոյակ.), նաև ապառաժ (ած.) քար, ծաղիկ (գոյակ.), նաև ծաղիկ (ածակ.) հասակ:

2. Վորոշ ածականներ հարատես գոյականաբար գործածվելիս գիտակցվում են վորպես գոյական. որինակ՝ աղբա, մուրացկան, ազգական, ամասուն, կենդանի, ցուրտ, ըոզ, հարվածային, պատուիլյուն) և այլն:

3. Ածականները գոյականի յեն վերածվում, յերբ գործ են ածվում իրեն հասուկ անուն. որինակ՝ Պարի, Անուօ կամ Նուշիկ, Պայծառ, Քընույշ, Սիրուն, Լենինական և այլն:

4. Վորոշ գոյականներ հարատես ածականաբար գործածվելիս գիտակցվում են վորպես ածական. որինակ՝ մուր (մութ գիշեր), խալթար (խավար գիշեր), ծակ, հրեշ:

§ 68. ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՎՄԱՆ ԴԵՊՔԻ

Ածականները գոյականաբար գործածվելիս հոլովվում են (մեծ մասամբ վորոշալառումով) և յենթարկվում ի հոլովման. որինակ՝

Յեզակի	Հոգնակի
Ու. լավը	լավերը
Ս. լավի	լավերի
Ն. այլն	և այլն:

§ 69. ԱԾԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

Կան ածանցներ, վորոնք կցվելով բառին (մեծ մասամբ գոյականին), վերածում են նրան ածականի:

Ածական դարձնող ածանցներ.

Ու միջանցքով դեպի բակ և զնում Վայնկան, բակից տըհեստանոց և անցնում ու այնտեղից ել կողքի շենքը, վորի փոքրիկ դռան վրա մեծատառերով գրված են

ԼԿՅԵՄ ԲԶԻՋ

բառերը:

Վայնկան տասներեք տարեկան ե, իսկ կանոնադրությամբ տասնչորս և սպահանջվում: Հենց այդպիս ել գրված ե. միության անդամ կարող և լինել ամեն մի անշափահաս բանվոր սկսած տասնչորս տարեկան հասակից։

Իսկ այժմ կարելի յե խորհրդական ձայնի իրավունքով ընդունել: Այս, ինչպես չի սիրում խորհրդական ձայն ունենալ—իստ վիրավորական ե: Գրիշտն չե վոր վճռական ձայն ունեցող անդամ ե, մինչդեռ միշտական անույն դաստիարակում և մինույն տրհեստանոցումն են... Ֆեղկան, Սենկան, Վասկան, Ստենկան, նույնպես և Վայնկա Լուզը—ինչո՞վ են լավ իրենից։

Վողջ դժբախտությունը տասներեքի մեջ ե:

Ցեվ յերբ վոր պատահում և ժողովում բանաձեռ են հանում և ձեռքերի անտառ և բարձրանում զլուխների շիկահեր մամուռի վրա—ամբողջ սրտով ուղում ե, ուղում և ձեռքը մյուսների պես բարձրացնի, բայց վախենում ե— նրան թվում ե, թե բոլորն ել իրեն են նայում և իսկույն պետք ե ասեն. Վայնկա, մի մոռանա կանոնադրությունը։

Ցերեկոյան ընդարձակ ակումբում ժամանցի յե հավաքվում գործարան է: Մեծերն ընթերցարանում լրադրով են զբաղվում յերիտասարդությունն ել ով ինչով կամենա:

Առաջին հերթին աղջիկներն են գրադարան մտնում: (Մ. Կոլոսով, «Ճամփերեք տարեկանը»)

(Տես § 38) 8. Արտադրել ուղղական հոլովով դրվագ գոյականները:

Նոջարանի դոները հանդարտիկ բացվեցին, շնջունակները վայրկենաբար ընդհատվեցին, ինչպես աղոտվների կոկոսը հրացանի ձայնից: Դուքս յեկալ մի մարդ մոտ վաթուն տարեկան, բարձրահասակ. առույգ ու խրոխտ: Նրա մաքուր սափրած յերեսը, դեմքի խոշոր գծերը, տչքի սուր արտահայտությունը, խիտ հոնքերը և մանավանդ թանձը ու ալեխառն ընչացքը, վորի ծայրին միացըրած եյին միրուքից միմի մաս—նիկողայուան դինվորականի տպավորություն եյին գործում:

(Շիրվանզաղե, «Քառո»)

(Տես § 39) 9. Արտադրել սեռական հոլովով գործածված գոյականները:

Ասին՝ համայն աշխարհում յերկու բանակ միայն կա՝ մեկ՝ խարդախ տերերի, հարուետների անկշտում, վոր լիանում են առատ, վայելում են տնինա, նստում են շին աներում և յերբեք չեն աշխատում: Նրանք, վոր տաք են հագնում, ու միշտ մտքուր, ու միշտ նոր: Գլխի տեղ վիճ ունեն մի ու անկշտում մի բերան, վոր հարում են ու վիխում, վոր կերակուր ուտեն նոր, վոր ափսսում են միայն, վոր աշխարհը չկերան: Նրանք, վոր տերն են հագնում մի հիմա քաղաքների, գյուղերի, պալատների, բերդերի մեծ— նրանք, վոր հացն են ուտում կիսաքաղցած բանվորի, դուրկով միշտ նրան, վոր եղ բարիքն ստեղծեց: Ստիպայն բանակը մյուս, մյուս բանակը են մեծ աշխատավոր բանակն են են անսասան, նրանց, վոր բյուր դարերի աշխատանքը ստեղծեց, վոր աշխատանքն յեղավ մեծ, բայց բարիքները չտեսան: Նրանց, վոր բյուր են հիմա, անհաշիվ ու անհամար, վոր մկաններ ունեն կուռ ու յերակներ վիթխարի— ու հոգիներ ունեն մեծ՝ տրեների նման վառ, և ստեղծում են բոլոր հրաշալիքներն աշխարհի: Նրանք, վոր հողն են փորում, մեղքում են կուրծքը հողի, ու վիթխարի գետերին հոսանքներ են տալիս նոր— կուրծք են տալիս ծովերի հորձանքներին կատաղի, գնացքներ են շարժում բյուր ու հանքեր են փորում խոր: Նրանք, վոր ուժ են կյանքի, կյանքի բաղուկն ստեղծող, վոր շինել են ինչ վոր կա, ինչ վոր դեռ պետք ե լինի. ասին ամբողջ աշխարհում ինչքան հանք կա, ինչքան հող, ինչքան բերք կա ու բարիք—պետք ե նրանցը լինի:

(Յ. Զարենց, «Յերգ ժողովրդի ժամկեց»)

(Տես § 40) 10. Արտազրել տըական հոլովով գործածված գոյականները:

Ու պայքարի յելան միծ նըանք մի մութ իրիկուն,
յերբ պատերազմ եր յերկրի սահմաններում հեռակա,
յելան բանվոր մարտիկներ խենթությունով ահարկու
ու բանակներ հանեցին արիստիրոս ու հսկա:
Քաղաքներում կարմբավառ դրոշակներ պարզեցին—
կուրծք տվեցին զորքերին արյունարու արքայի,—
սակայն չոգնեց բանվորին ստեպների գյուղացին,
անշարժ մնաց, ահարեկ՝ աչքը ահի ու մահի:

(Յե. Զարենց, «Յերդ ժողովրդի մասին»)

Լսել եք, աղերք, ում ալաչուխն ե
Լալվարին բարձած արձվի նման.
Լսել եք՝ են ում ոջախի ծուխն ե
Խեղճ ու նաչարին միշտ լինում դարման.
Լսել եք՝ ինչպես բազին ինքնակամ
Նըանից ազատ վորս չի պըտրտում.
Նըա մի ձենը, անունը անգամ
Մարդուն, հարամուն սարսափ են ազդում:
Յեկ ուզում ե միշտ ամեն մի սարվոր
Են ալաչուխին լինել դրացի . . .

(Կ. Միքայելյան, «Լալվարի վորսը»)

(Տես § 41) 11. Արտազրել հայցական հոլովով գործածված գոյականները:

Պատում ենք քարերն ու սարերը հսկա,
պոկում ենք ամբակուր ժայռերն իրարից,
փորում ենք արմատները մթին անտառի,
ու բացում ենք հողը յերակ առ յերակ:
Բըդի պես գզում ենք շերտերը պողպատի,
միացնում ենք իրար ցամաքն ու ծովերը,
աղմուկը հասնում ե արեին ու վե՛րը . . .
մենք ենք, վոր յերկինքը կանչեցինք մարտին
Փոխում ենք փրփրացող գետերի նեղ հունը,
ու չոր անապատը փոխում ենք շեն այգու,
աշխատող բազուկն ենք մենք գնահատում,
ու նըան վատ որից պահպանում ենք:
Մենք ծնվել ենք դաժան խավարում ու ցրտում,
մեր միտքն ու գործը անբաժան ու արթուն
մենք արյուն չենք թափում կառուցման այս մարտում:
գեղեցիկն ենք վինտրում . . .
Քանդում ենք, փշում ենք ինչ վատ եւ ինչ ար,
հարդում ենք ճամբաներ լեռներով, լեռան տակ,
շինում ալ արեից շենքեր նոր, սպիտակ,
բարձրացնում ենք կուանքը, կառուցում նոր աշխարհ . . .

(Սանիլի. «Ծումբի կայձը»)

(Տես § 42) 12. Արտազրել բացառական հոլովով գործածված գոյականները:

Հալաքվեցին նորից, յեկան
Քաղաքներից, հողից, հանքից,
Նոր ընկերներ հերոսական,
Մարտիկները նոր աշխարհի,
Մարտիկները նոր մարտերի,
Լեն արտերից ու հանքերից:
(«Զրույց նոյեմբերի մասին»)

(Տես § 43) 13. Դուքս զրել գործիական հոլովով գործածված գոյականները:

Այստեղ եր բնակվում Զիլզիլ քաղաքի հայտնի վաճառական Բաղդասարը, պարսից վերջին խանի ախոռապետ Ահրումի թոռը: Նա հայտնի յեր վոչ այնքան իր հարստությունով կամ ծագումով վորքան անմատչելի, ժանդ, նույնիսկ մարդարյաց բնույթով:

(Ճիրվանգաղեն, «Վարդան Ահրումյան»)

(Տես § 44) 14. Արտազրել ներգոյական հոլովով գործածված գոյականները:

Մենք փող զարկինք և արձագանքն ահավոր
Յերկրից-յերկիր վորոտաձայն շառաչեց,
Յեկ սրտերում միլիոնավոր, բյուրավոր
Բմբոստությունն ահագնացավ ու աճեց:

Զնդաններում, խճիթներում, հանքերում,
Ուր տառապած մարդն ե հարթում իր ուղին—
Վոտքի յելան ահազանգի զանգերով
Գնդերն անդուլ գործարանի ու հողին
Յեկ վոտնաձայնը գնդերի ընթացող
Յեկ շառաչյունը զենքերի մահանոտ—
Խրճիթներում հնչեց, վորպես մարտակոչ,
Պալատներում պայթեց, իբրև մահվան բոթ:

(Յե. Զարենց, «Մահվան քայլերգ»)

(Տես §§ 45, 46) 15. Արտազրել հոգնակի թվով գործածված գոյականները և վորոշել, թէ վոր հոլովով են դրված. որինակ՝ լեռների . . . սեսական հոլով և այլն:

Դողում են սիրուց սարեր ու ձորեր,
Յեկ խորհրդավոր մի թովիչ ձայնով
Խոսում են նըանք, իրար հետ փարվում,
Յերգում են, խնդում, հազար բերանով
Լալվարի վիթխար հասակը գովում:
Ահա գարնան հետ և շարան-շարան:
Դաշտավայրերից դեպի զով սարեր
Ջզվեց սայլերի, ուղտերի քարվան . . .

(Կ. Միքայելյան, «Լալվարի վսրսը»)

(Տես § 45, 46) 16. Արտադրել գոյական անուններն ու վորոշել նըանց թիվը ու հալովը:

Դողում են սիրուց սարեր ու ձորեր.
Յեզ խորհրդավոր մի թոփիչ ձայնով
Խոսում են նրանք, իրար հետ փարվում,
Յերգում են, խնդում, հաղար բերանով
Լալվարի վիթխար հասակը դովում:
Ահա գարնան հետ և շարանշարան
Դաշտավայրերից գեղի զով սարեր
Զգվեց սայլերի, ուղտերի քարվան...

(Ն. Միքարյան, «Լալվարի վորով»)

(Տես § 48) 17. Արտադրել գոյականները և վորոշել թե վոր հոլովման են պատկանում նրանք, որինակ, մանուկ... ան հոլովման և այլն:

Ծագում ե մանուկ արել գարնան
Կովկաս լեռների ձյունի պատճեղից
Զարթնում են մեկմեկ սարերն աննման
Չմոան անվրդով քնի մշուշից.
Ահա Լալվարի վիթխարի ուսին
Բաղմում ե արփեն թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար յերեսին
Նայում են, ծպտում տմպի մըշուշով...
Կեսոր ե արդեն. կանաչ լալվարից
Իջնում ե հանդիստ վոչխարը կըթի.
Կթվելով մասմաս, անցնում ե բերից,
Լսվում ե անուշ փշշոցը կաթի:
Հովիվ, հովվուհի նստած շարքերով
Կթում են ուրախ և անհոգ խնդում:

(Ն. Միքարյան, «Լալվարի վորով»)

(Տես § 50) 18. Արտադրեցէք հնչունափոխության յենթարկված գոյականները և դեմք գրեցէք նրանց ուղիղ ձեռ Ռունակ՝ թից... թուփ և այլն

Վերջին ձյուներն ել արդեն հալ ընկան,
Արտասկեց իսկույն լեռների հսկան.
Ամեն մի ձորից աղբյուր ե հոսում,
Ամեն մի թից բյուլբյուլ ե խոսում.
Յեզ գալար հոգիտ, և ժայոփ կրծքեր
Արձագանք տալով դարուն են հնչում.
Չմոան փարախից հովվական յերգեր
Զեփյուփի թեռվ սարերն են թոչում:
Մաղկալից աշխարհ անվերջ ձորերի
Բացվում ե, ժպտում կոկոնից դժարթ,
Փարթամ գեղության վոգին Գուգարքի
Շնչում ե գարնան բույրով անաղարտ.
Ամպերն ել իրար համբույրներ տալով,
Զվում են կայտառ, լալվարը դրկում,

Առաջին անգամ խիստ վորոտալով,
Գուգարք աշխարհին վողջույն են յերգում:
Յեզ հայրենիքում փայլակայծակի
Գիշերվա գրոշմած զաղտնի համբույրներ
Յերգում են յերկրին սերը յերկնքի...

(Վ. Միքարյան, «Լալվարի վորով»)

ԱԾԱԿԱՆՆԵՐ

(Տես § 63, 64, 65) 19. Արտադրել ածականները և վորոշել նըանց ահսակը. ութեակ՝ նուրբ... գորակական ածական և այլն:

Բոլոր ներկա յեղողների հայացքներն ուղղված եյին գեղի այլք ծրարը, իսկ ամենից ավելի մնկինը: Դա հանգուցյալի յերկրորդ վորդին եղ՝ Միքայելը, քսան և ութ տարեկան մի յերիտասարդ՝ նուրբ կազմվածքով: Նիհար, գունատ, ածուխի պես սև մաղերով և նորաձև սրուկ միրուքով: Նրա խոշոր, մուգ ընկուղեգույն աչքերն արտահայտիչ եյին, խելացի և միենույն ժամանակ կարծես անտարբեր գեղի ընտանեկան վիշտը: Արդարեւ նրա համար կորուստն այնքան չեր, վորքան իր յեղբորը հանձնված ծրարի բովանդակությունը: Դիտեր, վոր այդ ծրարի մեջ ամփոփված և հանգուցյալի կտակը, բայց ինչ կտակ—ահա խորհրդավոր ժամկեցականը, ահա այն, վոր պիտի վորոշն իր ճակատագիրն ու ապագան: Մերթ ընդ մերթ նա այնպիսի անհամբեր և ներվային շարժումներ եր անում, վոր կարծես ուղում եր հարձակվել ավագ յեղբոր վրա և խլել նըանից ծրարը, վոր սպունգի պես ծծում եր նրա ամբողջ ուշադրությունը, նույնիսկ ըոլորդացմունքները:

(Շիրվանզաղե, «Քառու»)

(Տես § 64) 20. Արտադրել վորակական ածականները և կազմել նըանց համեմատական և գերադրական աստիճանները:

Մանուկները միատեսակ են հագնված՝ յերկուսն ել արեխավոր, չթե հասարակ շապիկ՝ արմունկները կարկատած: Նրանցից մեկի գոտին ծովակոր ե, կարմիր, կապույտ վիճերով:

Աջ ու ձախ խոր ձորեր են... Ահա Գայլաբունի ձորը՝ հատակը մութ ու խոր. վշշոց ե գալիս, ներքեց ջուր ե վաղում, թե ժայռերի ճեղքերում խուլ քամին և շաշում: Մանուկներից մեկը քար ե շպառում, կուտում հնք, ականջ գնում... Քարը խուլ արձագանքով ընկնում ե... Ու դարձյալ չենք կարողանում վորոշել՝ ջներն ե վշշում, թե քամին:

Վեր են կենում մանուկները, հացի կապոցն առնում և բարձրանաւ դեպի բրուտի քարանձավները: Նեղ արահետ ե, վոր գոյացել ե մարդկանց վոտքերի հեաքից, սմբակների գոփելուց: Վորտեղ քարը փուխը ե, գոյացել են խոռոչներ: Կարծը տեղերը պաղպում են կապույտ փայլով: Այդ արահետի կապերն են սանդուխաձեն, վորին հասնելուց ձին մոռթը կուտցնում ե, նախ հոտոտում, գննում ե, ապա զգուշությամբ վոտը փոխում, ինչպես սառույցի վրա: Զինի թե վոտքը սահի:

(Բակոնց, «Քիպի բրուտի քարանձավը»)

ԹՎԱԿԱՆՆԵՐ

(Տես §§ 71, 72) 21. ա) Արտագրել թվական անունները առանձին՝
բ) Դրել նույն թվականների դասականը:

Թարառուղարն արագորեն հանեց իր մաշված-ջարդված պորտա-
մոնեն, բաց արեց, միջի փողը—սև ու սպիտակ զրամներ—թափեց զրասե-
ղանի վրա և սկսեց համրել զրամները մեկ-մեկ քաշելով մի կողմը—10, 11,
15, 20, 25, 29, 35, 37, 50, 52, 55, 58, 60, 62 կոպեկ։ Ահա իմ ունեցած
բոլոր կապիտալը։ Թե վոր սրանից 5 ոռութի դուրս կգա, վերցրու։ Հինգ
տմիս և ոռոմիկ չեմ ստացել կհավատամա թե չե...

Պատրիկյանը ձեռքով հուսահատական ժի շարժում արակ և դուրս
գնաց։

(Նար-Դոս, «Նեղ որերից մեկը»)

ԴԵՐԱՆՈՒԽՆԵՐ

(Տես §§ 75, 76) 22. Դուրս գրել գերանունները և վորոշել նրանց տեսակը. որինակ՝
վորոնց ... հարաբերական գերանուն և այլն։

Յերեք տարեկան հասակում վարդանը կարմրադեմ, կայտառ մանուկ
եր, հաստիկ հյութալի շրթունքներով, վորոնց միջից յերեւում ևին նրա
առաջին մանկական ատամները։ Նրան թույլ եյին տալիս տնից դուրս գալ
իր քրոջ հսկողությամբ։ Մարիսամբ հինգ տարով յեղբորից մեծ լինելով, կա-
րող եր նրան հոգանավորել նա շալակում եր վարդանին, տանում փողոց
և այստեղ հետը խաղում, չխողնելով նրան միանալ փողոցի յերեխաներին
հոր պատվերի համաձայն։ Սակայն, ինչպես յերեւում եր, Վարդանը Բաղ-
դասարի մարդատյաց բարքը չեր ժառանգել։ Ընդհակառակը, նա ձգուում
եր խառնվել հասակակիցների խմբին և նրանց հետ խաղալ նա սիրում եր
խաղալիքներ, հենց վոր մի յերեխայի ձեռքում տեսնում եր մի վորեն գրա-
վիչ բան, վազում եր ու աշխատում խլել նրանից։ Սյնինչ՝ ինքը յերբեք
վոչ մի բան չեր տալիս ուրիշներին, թեկուղ միքանի վայրկյանով։

(Շիրվանզադե, «Վարդան Արումյան»)

(Տես §§ 78—85) 23. Դուրս գրել գերանունները և վորոշել նրանց տեսակը, թիվը և
հորովը։

Բայց քաղցած յերեխաները չվախեցան այդ սպառնալիքից. հազիվ
քույրը մի յերկու քայլ եր արեւ, վոր նրանք ձեռները կոխեցին տոպակը
և յուրաքանչյուրը թողրեց հացի առաջին պատահած պատառը։ Սոնեն այս
անգամ ել կամեցավ վրա հասնել, բայց արդեն ուշ եր, յերեխաներից մեկը
մի անկյուն թռավ, մյուսը՝ մյուս և յուրաքանչյուրն արդեն ագահաբար
կըծում եր իր հափշտակած վորով, յերբ քույրը նախ մեկին սկսեց թակել
հետո մյուսին։ Յերեխաները կուչ եյին յեկել մեկը այս, մյուսն այն
կյունում, հափշտակած հացի կտորները պինդ շեքներն եյին կոխել, վոր
քույրը չխլի, և թեկ քրոջ անխնա հարվածները բավական ցավ եյին պատ-
ճառում նրանց տկլոր մարմնին, բայց նրանք ձայները փորն եյին զցել
լաց չեյին լինում—յերեկ զգում եյին, վոր հանցավոր են և իրենց արժանի
պատիճն են կրում։

(Նար-Դոս, «Հաց ու պանիր»)

Սովորեց նաև, վոր այստեղ վոչ վոք սեփական գործ չունի, վոր մե-
նակ հոգա։ Այստեղ բոլորը պիտի հոգան։ Այդ անչափ հեշտ և—վրտեղից
վորուեղ... Յեկ հետո, այստեղ վոչ վոք այնպես անտեր չի գործի մեջ, ինչ-
պէս Պարսկաստանում, ուր չոքեցիր գործի մեջ, ընկար—վերջու և, մեռիք։
Ահա Պարսկաստանը։

(Դ. Դեմիքը յան, «Աբովու»)

ԲԱՅԵՐ

(Տես §§ 89—90) 24. Արտագրել անկատար դերբայով գործածված բայերը և յուրաքան-
չյուրի դիմաց գրել նույն բայի ապառնի դերբայտական ձևը։

Ե՞ն վոր կիսահալ սառուցի տակից
Ժիր վատակներն են հերհե լողում,
Ե՞ն վոր ձյուների վերջին հալոցքից
Թավիշ, աղվամաղ կանաչն ե շողում,
Ե՞ն վոր արեկ կենսատու շողքից
Գարնան առաջին ծաղիկն ե ծլում
Յեկ մանուկի պես արթնացած քնից
Աչերը ճմլում
Յիս այն եմ սիրում։

(Ճ. Ճակ. «Յես այն եմ սիրում»)

(Տես §§ 91 և 92) 25. Արտագրել վաղակատար և հարակատար դերբայները։

Բազմափորձերում ուազմական խնդիրները գերազանց և ճշությամբ
կատարելու համար լավագույն կարմիր բանակային իլիկո նազարաձեն
պարզեցատրվեց յերկշաբաթյա արձակուրզով։

Մի տարի յե արդեն, վոր նա հեռացել և իր հայրենի Մաղլակ գյու-
ղից, վորի հետ կապված եյին իր մանկական ու պատանեկական վառ հի-
շողությունները և վոր այժմ, այս թարմ մայիսին, յերեկ կորած ե բալե-
նիների ու շլորենիների անուշ բուրմունքի մեջ։

Վաղուց չի տեսել ու կարոտցել և իր յերիտասարդ կնոջը՝ կայտա-
ռ վարդուն Մարինեյին, վորն անշուշտ իր հերթին, մանավանդ այս գե-
ղեցիկ գարնան մեծ կարոտվ և սպասում հեռավոր վայրերում գտնված իր
թանգաղին ամուսնուն։

Զի տեսել նաև իր մեծ յեղբորը՝ Վարդենային, վորն իլիկոյի հեռանա-
լուց հետո տան հոգսերի վողջ ծանրությունը, յերկու ընտանիքի պահպան-
ման գործն ամրողավին ծանրացել եր իր վրա։ Յերկու յեղբայրներն ապ-
րում եյին անբաժան,—մի հարկի տակ։

(Դոստ. Լորդկիպանիձե. «Յեղբայրները»)

(Տես §§ 101 և 102) 26. Արտագրել անցյալ անկատար ժամանակով գործածված բայերը:

Յերկըորդ որն եր՝ Մաղդայում եյինք, Ալաղյաղի լանջի ամենաբարձր պյուղերից մեկում, վորտեղից բացվում է հիանալի տեսարան դեպի դաշտը: Ներքե փոված եր Արագգայանի տափարակից մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափարակը, գյուղերն ու քաղաքները, վոր ցամաք գաշտում կանաչ պարտեղների յեն նման, յերկաթուղու սպիտակ կայարանները, անբաժան ակացիաներով ու բարդիներով:

Յես և ընկերս նստել եյինք քարին՝ հիացմունքով դաշտին եյինք նայում ու փորձում գտնել ծանոթ գյուղեր: Արել կախ եր ընկել մայրամուտի կողմբ: Սարից զով քամի յեր փչում, դաշտը վրոպղած եր տրեխ լույսով, և արծաթի հալոցի նման պսպղում եյին վոչ միայն Արաքսի ոճանման հոսանքը, այլև միքանի փոքրիկ լճակներ ու գյուղական առուներ:

Մեր յետել Մաղդան եր՝ տափարակ կտուրներով նոր տներ կանաչ ների մեջ Յերկու կին կտուրների վրա ցորեն եյին քամում: Ողը ջինջ եր ու թափանցիկ, արևի տակ փայլիլում եյին ցորենի քիստերն ու թեփը, յերք վոսկեղույն փոշու հետ խառնված ցորենը կանայք մազում եյին որոր վելով:

Մեղնից մի քիչ հեռու արտերն եյին: Վոտքերը վեր քաշած մի մարդ ջուր եր անում: Լուսմ եյինք, թե ինչպես եր բանց պնդում, յերբ խրվում նը ավազոտ հողում: Զորակից յերդի ձայն եր լսվում:

(Ա. Բակոնց, «Մուրոյի զբուցը»)

(Տես §§ 101 և 102) 27. Արտագրեցեք ներկա ժամանակով գործածված բայերը և դրեւ անցյալ անկատար ժամանակով:

Իսկ հարս ու աղջիկ սափորը ուսին՝
Չնում են խումբ-խումբ աղբյուրը ջրի,
Դողում են նրանց ժպտուն յերեսին
Բոլոր գույները Գուգարք լիռների:
Յեվ բյուր ծաղկանիշ նախշուն շորերով
Անցնում են նրանք ուղին հոտավետ,
Յեվ թարմ կուսական ճմայիչ բույրով
Մըսում են սարի ծաղիկների հետ:
Յեռում ե խաղը հարաների դիմաց,
Նայում են միմյանց աչքերի տակով,
Կարմրում են, ժպտում կույսերը կամաց,
Անցնելով անուշ սիրո տրոփով:

(Ա. Միքարյան, «Լալվարի փորսը»)

(Տես §§ 101 և 102) 28. Անկատար անցյալով գործածված բայերը կրեք ներկա ժամանակով:

Յերկըորդ որն եր՝ Մաղդայում եյինք, Ալաղյաղի լանջի ամենաբարձր պյուղերից մեկում, վորտեղից բացվում է հիանալի տեսարան դեպի դաշտը: Ներքե փոված եր Արագգայանի տափարակից մինչև Անի կայարանը հասնող ընդարձակ տափարակը, գյուղերն ու քաղաքները, վոր ցամաք դաշտում կանաչ պարտեղների յեն նման, յերկաթուղու սպիտակ կայարանները, անբաժան ակացիաներով ու բարդիներով:

Յես և ընկերս նստել եյինք քարին՝ հիացմունքով դաշտին եյինք նայում ու փորձում գտնել ծանոթ գյուղեր: Արել կախ եր ընկել մայրամուտի կողմբ: Սարից զով քամի յեր փչում, դաշտը վողողված եր արևի լույս և արծաթի հալոցի նման պսպղում եյին վոչ միայն Արաքսի ոճանման հոսանքը, այլև միքանի փոքրիկ լճակներ ու գյուղական առուներ:

(Ա. Բակոնց, «Մուրոյի զբուցը»)

(Տես §§ 101 և 102) 29. Արտագրել սահմանական յեղանակով գործածված բայերը և վորոշել թե վոր ժամանակով են գործածված:

Քաղաքից շուսն դուրս ե գալիս, սլաքի նման ձգվում, կամուրջի մոտ կեռ տալիս, ապա վորոր մոլոր բարձրանում բարձր սարը: Ու գնում ե, գնում ե շուսն, ինչպես գետը, բաղմաթիվ լիռնային արահետներ խառնվում են նրան և ինչքան գնում ե, այնքան շատ ե ծեծված, այնքան հին և ճանապարհը:

Այն յերեկո մենք հանդիպում ենք իրար, յես ու Անդոն: Նա պառկում ե կողքի վրա, յես նստում եմ քարին: Նա դեպի քաղաքն ե նայում, դեպի զյուղի ճանապարհը, վորով անցնում են այգիներից և արտերից վերագարձող հոգնած մարդիկ և յեղները:

(Ա. Բակոնց, «Իմ ընկեր Անդոն»)

(Տես § 103) 30. Արտագրել անցյալ կատարյալով գործածված բայերը:

Թիչ անց բերին ծուտիկին հագցրին նոր կարած զինվորական շորերը, բոլորն անգլիական: Նա միջանցքում իր ցնցոտիները հանեց, դուրս գցեց, նոր շորերը հագավ և անդիլական շինելի մեջ փաթաթվելով, պառկից դրասենյակի մի անկյունում թափված անդիլական թամբերի վրա:

Պատի ժամացույցը չորսը խիեց: Ճուտիկը վերկացավ անկյունից, շինելը հագավ, զոտին ամուր կապեց ու մոտեցավ շտարի պետի սեղանին: Նա զգուշությամբ քաշեց սկզբանի դաշտը և մթնում չիմանալով ի՞նչը վերցնի, ի՞նչը թողնի, յեղած բոլոր թղթերը հավաքեց, զգուշությամբ իրթեց պայուսակը և շինելի տակ դոտին ամրացնելով, հանդարտ դուրս յեկավ:

(Ա. Մանյան, «Կրակե ողակի մեջ»)

(Տես § 109) 31. Արտագրել հրամայական յեղանակով գործածված բայերը:

Բուքն ե պարում ոճագալար:

Քամին իր սառն փողն ե ածում:

Ու բքի հետ բքահալած,

Զայն ե տալիս կատարածուն.

— Սերմը՛, սերմը՛, բերեք դտեք՛,

Միացրեք մի ամբարո՛ւմ:

Ամբարդ բաց, քավոր Մուշեղ:

Հորդ հանճի՛, ուստա հարութ:

(Ա. Զաշյան, «Մուշեղի քարտիք»)

(Տես § 111) 32. Արտագրել պայմանական յեղանակի բայերը և վորոշել նըանց ժամանակը
Կոճի յերկերը քեզ հետ, կմեծանաս դու,
Ժամանակը կարծաթի մաղերդ մի որ,
Յեզ խնդրությունը կյանքի քո պայծառ հոգում,
Վոսկի մի յերդ կդառնա, վոսկի մի որոր:

Որորոցում կնիքի մի լուսն մանուկ,
Կկախվի քո հայացքը նըա սնարին,
Կշնջան շուրթերդ մի պայծառ անուն,
Ու մեղմ մի յերդ կհնչի մի նոր քնարից:

Ու մեղմ մի յերդ կհնչի մի նոր քնարից,
Որորոցում կնիքի մանուկը լուսն,
Իսկ մենք կժպտանք նըան ամեն մի քարից,
Յեզ սյուների վրայից վորպես վառ լույսեր:

(Գ. Սարյան, «Յերդ տարեղարձի»)

(Տես § 112) 33. Արտագրել հարկադրական յեղանակով գործածված բայերը

Մենք գիտեյինք, վոր այդ յերեկո պետք ե կյանար Պետրովրադի
խորհրդի նիստը, ուր Լենինը պիտի զեկուցեր Գերմանիայի հետ վարած
հաշտության բանակցությունների մասին: Այդ յելույթն ամենանշանավոր-
ներից մեկը պիտի լիներ: Զեկուցումից հետո Լենինը պիտի ճառ խոսեր նեվսկի
ույոնի բանվորական ֆողովում:

(Եպշտեն, «Իւյիչը»)

Սակայն հայրը եգուց պիտի դնա...
Պիտի ճամբար դնի նըանց—ընկեր Լենինը...
Պիտի խոսքեր ասի նըանց եգուց:
Իսկ ի՞նքը...
Պիտի եսպես տնում ելի նստած մնա—
արդեն հասակն առած պատանի յե թեկուլ...

(Յե. Զարենց, «Լենին քեռին»)

(Տես §§ 95—112) 34. Վորոշել բայերի յեղանակը, ժամանակը, գեմքը և թիվը

Ակորը քնած եր անհանդիստ, հաճուխ դեն եր ձգում վերմակը, ին
զոր անկապ բառեր ասում: Մարգոն շարունակ նստած եր նըա զլխավերելը,
սրտի մորմոքով նա լսում եր Ակորի զառանցանքն ու մասյլ մտքերի մեջ
ընկնում: Նըա ծանրանալու հետ ինքն ել եր ծանրանում:

Ակորն այրվում եր տեսնդից: Նըան թվում եր, թե մահմակալի տակից
վառում են իրեն, հետո իբր վառվութե տունը, ինքը դուրս թռչում, ընկնում
դաշտերը, սարերը... Անցնում ե կանաչներով, սառնորակ աղբյուրների մոտով,
բայց հենց մոտենում ե, վոր խմի, ծարավը հաղեցնի, ինչ վոր զինված
մարդիկ հարձակվում են ու չեն թողնում...

Նա առաջ ե գնում, հասնում ե ձորակին: Նայում է ձորին ու զարմա-
նում: դիմացը բարձրացել է մի հսկա արձան: Արձան է կարծես, բայց
միենույն ժամանակ է կենդանի մարդ, — Լենինն է իր առաջ, լույսով վողող-
ված: Նա խորաթափանց աչք է ածում չորս կողմը:

(Արագի, «Լուսները»)

35. Վորոշել բայերի յեղանակը:

Այս վտիտ բանվորը, այս վտիտ տղան
Այն տարին յեղել է համարյա խոխա—
Այդ այն մութ տարին եր, յերբ ծովի բացեց
Գրավեց քաղաքը մեր—անդիմացին:
Յերբ յեկավ, նստեց ու հպեց պատին
Մեր ըմբռտ քաղաքն ու պրոլետարիատին:
Տոմսոնի կոշիկն եր քաղաքում տիրում,—
Թշնամին զարման եր, բարեկամը—հեռու...
Բայց յե՞րբ ե բանվորը լուել աշխարհում:
Նա խուլ պայքարում եր, անդո՞ւ պայքարում:

(Յե. Զարենց, «Բալլագ»)

36. Վորոշել բայերի յեղանակը, ժամանակը, թիվը և գեմքը:
Ու հաղարներ գնացին, ու միլիոններ, ու բյուրեր,
դեպի դաշտերը հեռու ուղարկվեցին շարեշար.
պիտի այնտեղ նըանց տաք գնդացիրը համբռուրեր,
պիտի գնդակը սուլեր ու թնդանոթը ճշար:
Սյստեղ խեղդող դադերի ամպերը տոթ ու դեղին
պիտի արյուն թքեյին ու արնահաղ մեռնեյին—
մահն եր նըանց սպասում զդվանքներով հրեղին:
Յերեք տարի շարունակ սպասեցին տներում,
վոր կոփվը վերջանա—չվերջացավ սակայն նա.
աչքերը ջուր կարեցին՝ հասած արնոտ են հեռուն,
մահն եր ենտեղ դեղերում ու գիշատում անինա:
Եսպես յեղավ: Յեզ ահա քաղաքներում բազմամարդ,
ուր յերկաթե բյուրավոր գործարաններ կային մեծ,
մի առավոտ յերկնահուղ ծիսնելույշները յերկաթ
կոչ նետեցին զինվորին՝ զինվորի դիմ չկովե՛ս:

(Յե. Զարենց, «Յերդ ժողովրդի մասին»)

(Տես § 113) 37. Արտագրել ժխտական բնույթով գործածված բայերը և վորոշել նըանց
յեղանակը, ժամանակը, գեմքը և թիվը:

— Վալողիա, — դիմում է ընկերներից մեկը, — միթե չես հասկանում,
վոր սրանք մի պատճառ են վնասում, վորպեսզի զնդակահարեն բոլորիս:
Մենք չպետք ե նոր զոհեր տանք. չե վոր մեր ընկերները շուտով կմտնեն
քաղաք...

— Զեմ կարող համբերել, հասկանում ես, չեմ կարող, — ասում ե վա-
լողիան, բռունցքները՝ ցնցելով, ապա հենվելով պատին, յերկու ձեռքով
ակածում ե գլուխը:

Թունը փախչում ե բոլորի աչքերից. հուզված ջղերը յերկար ժամա-
նակ չեն հանդսաւանում: Բայց գալիս ե պահապանը ու պահանջում, վոր
գնան իրենց տեղերը:

Նորից պասկում են, ու ցած ձայնով խոսում իրար հետ, ծխելով հա-
սարակ, կոշտ թութունը: Խոսում են իրենց ընկերների մասին, նրանց վեր-
ջին խոսքերի մասին...

— Մնաք բարով ընկերներ, մենք ել չենք դառնալու...

Վաղ առավոտից բանտի . դուռը բացվում ե ու ել չի կողավում:
Պահապանը ներս և մտնում ու բարեսում քծնելով. նրա դաժան, դորշ դեմ-
քին այնքան և սազում ժպիտը, վորքան ազատությունը՝ բանտին:

— Յեթե ուղում եք, կարող եք դուրս գնալ... — առաջարկում ե նա:

Բայց վոչ վոք դուրս չի գնում, զգուշանալով պրովոկացիայից, վոր-
պեսպի փախչողների տեղ չդնեն ու դնդակահարեն:

(Արագի, «Խորհրդային առավոտը»)

(Ցես §§ 95—114) 38. Վորոնցուց բայերի գեմքը, թիվը, ժամանակը, յեղանակը, սեռը և
խոսաբանման բնույթը. որինակ՝ ասում եյին... ներգործական, սահմանական յեղանակ, ան-
ցյալ անկատար ժամանակ, հոգնակի Յ-րդ գեմք, դրական բնույթի խոնարհում:

Ասում եյին գարուն ե, բայց մաքուր ող մենք չեյինք շնչում:
Լսում եյինք, վոր ծառերը ծաղկել, պարտեղները գույնդույն ծաղիկներով
են զարդարվել, բայց մենք չեյինք հոտոտում այդ ծաղիկները, չեյինք հան-
գըտանում նրանց զովարար ստվերների տակ: Մեղ թվում եր, թե կյանքն
հենց այն ե, վոր մինչեւ իրիկուն խոնավ ու վտանդավոր հորերում աշխա-
տենք, իսկ զիշերները միմյանց սեղմելով քնինք: Բացի այդ չարչարանք-
ներից, աշխատանքի ընթացքում հանդիպած քարերն ու հսկու ապառաժ-
ները մեղ շատ նեղություն եյին պատճառում, վորովհետեւ են ժամանակ
մեր այժմյան տեսած հանքափոր մեքենաները չկային:

Չեմ հիշում, թե քանի հարյուր սաժեն փորելուց հետո նոր մի հոր
պատրաստ կլիներ:

Պատերից հոսող ջրերը, վերևից փուլ յեկող քարերը քիչ մարդկանց
հաշմանդամ դարձրին:

Հորից դուրս գալուց կես ժամ հետո հողիկ կարողանում եյինք մեր
աչքերը բաց անել կարծես բնույթյունն ել փուլել եր մեր աչքերը:

Վերջապես մի որ ել փորձանքի տուաջին հարվածն իջավ մեր զլսին:
Ո՞ք... իսկի չեմ մոռանում: Տեղի ունեցող այդ աղետալի տեսարանը կարծին
հենց այս ըուպեյին ել պատկերառում ե իմ առաջ:

(Մ. Ռահիմ, «Աղբիլի հարված»)

Համբոն քաղաքում Դիքորին ծառա տվավ բաղազ Արտեմի տանը:
Պայմանն են եր, վոր Գիքորը պետք ե տունը մաքեր, ամանները լվանար,
վունամանները սրբեր, զուքանը բաժին տաներ, ու եստեսակ մանը ծառա-
յություններ, մինչեւ մի տարի:

Մի աարուց յետը բաղազը նրան պետք ե տաներ դռւքան, շիներ գուրքնի
ռաշկերտ», ու եսպես Գիքորը պետք ե բարձրանար:

— Հինդ տարի զեռ փող չեմ տալ, — ասավ բաղազը պայմանը կապելիս: —
Թե զրուստը կուղես, զեռ դու պետք ե տաս, վոր քու վորդին բան ե սովո-
րելու: Այս իսկի բան չդիտիս:

— Վարտեղից զիտենա, խաղելին ջան, — պատասխանեց Համբոն, —
վոր զիտենա, ել ո՞ւր կըերեյի: յես ել բերել եմ, վոր բան սովորի....

— Կըսովորի, ամեն բան կըսովորի: Ենպես սովորի վո՞ր...: Ձեր կող-
մերից են նիկոլն ինչ է, վոր իրեն համար դուքան ունի բաց արած, նա
յել ինձ մոտ ե մարդ դասել: Ամա վերջում մի ջուխտ չայի դրալ ու մի քա-
նի բան գողացավ....

(Հ. Թումանյան, «Գիքորը»)

(Ցես §§ 120—125) 39. Արտազել անկանոն բայերը և զրել նրանց անցյալ կատարյալն
հրամայականը:

Ալեքսանն անզուսպ վոխով եր խոսում,

Խայթում Սահթըսին և նրա տղին:

Բեյբուզը հուզված կծում եր լեզուն

Յեւ սպասում եր լուռ ու կատաղի:

Դիվական ուժով զսպում եր իրեն,

Վոր չվերցնի բանը շպրտած,

Վոր ամբարտավան Ռուշանանց տղին

Իր պազի տեղում չընկնի թպրտա...

Յեւ հասկանում եր թոռը Ռուշանին

Նրա աշքերի թունավոր լեզուն:

Ուստի նա ցույց եր առլիս սուր ժանիք

Յեւ ավելի սուր ու խորն եր խոցում:

Զար ծղրտոցով դուրս թուալ տանից

Սանթըսի կինը — Հոռոմսիմ Զալոն:

Հայոյեց, թքեց նա Ալեքսանին,

Շկերած աղուհացն յերեսին տալով:

Ու հետզետե խառնըվան վեճին

Սանթըսի հարսներն անզամ չխոսկան:

Յերեխաները շուն արձակեցին

Ու հայոյելով, լալով մեջ ընկան:

(Ն. Զարյան, «Ռուշանի քաբակը»):

40. Արտազել թե կանոնավոր և թե անկանոն բայերը, վորոշել նրանց Բիվը, գեմքը,
ժամանակը և սեռը:

Այժմ անցավ գործադուների խնդրին: Հատ եյության նա դեմ եր գոր-
ծադուներին: Այդ շատ դանդաղ միջոց ե և ավելի ևս սաստկացնում ե բան-
վորների տանջանքները: Բայց վորովհետեւ պայքարի լավագույն միջոցը չկա,
պետք ե գործադուն անել յերբ այդ անխուսափելի յե, գործադուներն, այսու-
ամենայնիվ, խիստ վաստամ են կապիտալիստներին: Այս գեպօւմ, նրա ասե-
լով, ինտերնացիոնալը մի կատարյալ նախախնամություն ե հանդիսանում
գործադունավորների համար: Նա որինակներ բերեց: Պարիզում բրոնզա-

գործների գործադուլի ժամանակ գործատերերը մի անգամից զիջեցին ամեն բանում, հենց վոր իմաստն, թե ինտերնացիոնալն իր ողնությունն է ուղարկում: Հոնդրնում ինտերնացիոնալը փրկեց ածխափորներին՝ իր հաշվով Բելգիա վերադարձնելով գործատերերի ապագրած բանվորներին: Հենց վոր բանվորները մտնում են միջազգային միության մեջ, գործատերերին սարսափ ե բռնում: Նրանք դիտեն, վոր այժմ իրենց աշխատավորական այն մեծ բանակի մի մասը, ուր ամենքն ել պատրաստ են ավելի շուտ դոհվել իրար համար, քան ստրուկ մասը կապիտալին:

(Եմիլ Զոլա, «Ինտերնացիոնալը բանվորների մեջ»):

(Տես § 119) 41. Արտագրեցեք պատճառական կերպի բայերը:

Սիրելի Հոխվահմե.

Հորս ցավալի դրությունն այն աստիճան զբաղեցնում եր ինձ, վոր միը ընտանիքի մյուս անգամների մտախն վերջին անգամներս, կարծեմ, վոչինչ չեյի դրում քեզ: Բայց նախ պետք ե ասեմ, վոր հորս դրության մեջ վոչ մի նկատելի փոփոխություն չի կատարվել զեպի լավը: Նա դարձալ վոչ վոքի չի ճանաչում: Մայրս, վոր սկզբներում սաստիկ վշտանում եր և համարյա թե միշտ լաց եր լինում, այժմ, կարծես, հաշտավել եր դրության նետ, և յես այլևս վոչ մի տրատնչ չեմ լսում նրա բերանից: Նա, կարծես, տեղն ու տեղը սառել ե: Ամեն որ վաղ տասավոտյան մտնում ե հորս մոտ, հազնում ե, լվացվել ե տալիս նրան, թեյ խմացնում, ձեռքեց բռնած՝ սենյակում միքանի անգամ անց ու դարձ ե անել տալիս, կեսորին իր ձեռքով ճաշ ե ուտեցնում, յերեկոյան դարձյալ թեյ, զիշերը հանում ե, պառկեցնում ե քննցնելու, —և այդ բոլորը կատարում ե լուս, յերբեմն միշտ այն խոր հառաջում ե: Շատ անգամ գիշերները լուսացնում ե ճիվանդի մոտ՝ աթոռի վրա, չնայելով թախանձանքիս, վոր այդ պաշտանի կատարումը ինձ թողնե:

(Նար-Ռոս, «Աննա Սարոյան»)

(Տես §§ 114—125) 42. Արտագրեցեք բայերը և պարզեցեք, թե վոր սեռի և ինչ կերպի բայեր են:

Կանգնած ժպտում եր ուրախ, և նրա բերանի մեջ յերևացող սպիտակ ատամների փայլն առանձին գունավորում եր տալիս նրա՝ առանց այն ել գեղեցիկ ու փարթամ գեմքին: Ձեռքին բռնած ուներ բոլորովին մերկացրած յերեխան. փոքրիկը չեր ճանաչում հորը և զրա համար գեմքը մի փոքր թթվեցրել եր:

Մառանի կողմից զանդաղ քայլերով մոտենում ե Վարդենան, ցեխուտած ձեռքերը սրբում ե խոտերի վրա, վեր քաշած թևերը բաց թողնում:

Մարինեն ուրախ ժպտալով գիմտօրում ե զարմացական հայացքով իրեն նայող ամուսնուն՝ զեպի նա մեկնելով իր զավակին: Վարդենան ծիծաղում ե բարձրածայն և ինչ վոր բառեր ե արտասանում, բայց Իլիկոն վոչինչ չի հասկանում:

Նա այնքան կորցրել եր իրեն, վոր չհասկանալով, թե ինչ ե կատար-

գում իր շուրջը՝ խելագարի նման հանեց ծոցագրպանից հեռագիւը, նորից կարդաց՝ չհավատալով իր աչքերին, կարդաց այն հեռագիւը, վոր մինչ այդ վայրկյան այնքան ծանր տանջանք ու մտածմունքներ եր պատճառել նրան ու տիրեցրել նրա սիրութ:

(Կ. Լորդիկալանիծե, «Յեղբայրներ»)

ՄԱԿՐԱՅՆԵՐ

(Տես § 126) 43. Արտագրել այս հատվածը և բնդկել մակրայները:

Դիշերվա այս ժամերին ձորալանջի կածաններով լույս եր շարժվում, յերբեմն խումբ-խումբ, յերբեմն զատ-զատ: Տաննելի բանվորներն են դրանք, վոր վերջացնելով իրենց հերթը, վերադառնում են մոտակու գյուղերը հանգըտանալու: Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին—գտանդավոր նեղ կածանները լուսավորելու համար: Խորհրդավոր են թափառող այդ լույսերը, նրանք մերթ ծածկվում են ժայռերի յետեւ, մերթ նորից հայտնվում:

(Արագի, «Լույսերը»)

(Տես §§ 126—128) 44. Արտագրեցեք և խմբավորեցեք մակրայներն ըստ տեսակների:

Այս առավոտ շատ կանուխ վերկացալ Իլիկոն, զարթեցրեց ընկերներին և տասնակետին խնդրեց, վոր ինքն ել ներկա լինի այսորվա վարժություններին:

Հանդատի որ եր, տղաներն սկզբում չեմ ու չում արին, սակայն յերբ լսեցին, վոր պետն ել և ներկա լինելու, անմիջապես պատրաստեցին և արագ գուրս յեկան դաշտ:

Որն արդեն լուսացել եր:

Ամպերը, վորոնք սպառնում եյին անձրե, զով քամին կիտեց նրանց լեռների գաղաթներին և ինքն ել կարծես իր պարտականությունը լիովին կատարած թողեց ու այդ վայրեց հեռացավ, իր յետեւից թողնելով մի շատ հանդիս ու խաղաղ յեղանակ:

Այժմ բանակի զլսին այնպիսի պայծառ ու անխառ յերկնակամար եր, վոր նրան նայողը չեր կարծի յերբեք, վոր այս յերկինքը յերբեն կարող եր անձրե տալ:

(Կ. Լորդիկալանիծե, «Յեղբայրներ»)

Կ Ա Պ Ե Ր

(Տես §§ 129—131) 45. Ստուգեցեք և խմբավորեցեք կապերն ըստ տեսակների:

Յեզ նա թռչկոտելով՝ վաղեց փողոցով:

Քան սպանված եյին ընկած սալտատակի վրա: Ծուխը մշուշի պես բռնել եր փողոցը: Կովողները գժվարությամբ եյին ջոկում իրար, թեև փողոցն առանձնապես յերկար չեր: Այդ ձեռնուու յեր Գավրոշի համար նա իր կարծ հասակի շնորհիվ, ծխի ծածկույթի տակ բավականին հեռու-գնաց փողու-

Եի մեջ ու կարողացավ վերցնել յոթ թե ութ փամփուշտակալ՝ առանց իրեն վտանգելու: Նա մեկ սողում եր փորի վրա, մեկ չորեքթաթ եր տալիս, կողմն ատամներով բռնած, զալարվում եր, անցնում եր մի դիտկից մյուսը: Բարիկադի ընկերները, վոր ամբողջ ժամանակ հետեւում եյին նրան, վտին նում եյին ձայն տալուց, վոր թշնամու ուշադրությունը չդարձնեն նրա վրա:

(Հյուզո, «Բառիկադների վրա»)

ԾԱՀԱՊՆԵՐ

(Տես §§ 132 և 132) 46. Արտադրել շաղկապները և խմբավորել ըստ տեսակների:

Սիրելի Հռիփսիմե.

Հորս ցավալի դրությունն այն աստիճան զրադեցնում եր ինձ, վոր մեր ընտանիքի մյուս անդամների մասին վերջին անգամներս, կարծեմ, վուչինչ չեյի զբում քնայց նախ պետք ե ասեմ, վոր հորս դրության մեջ վոչ մի փոփոխություն չի կատարվել գետի լավը: Նա դարձյալ վոչ վոքի չի ճանաչում: Մայրս, վոր սկզբում վշտանում եր և համարյա թե միշտ լաց եր լինում, այժմ, կարծես, հաշտվել ե իր գրության հետ, և յես այլնս վոչ մի տրանունջ չեմ լսում նրա բերանից: Նա, կարծես, տեղին ու տեղը սառել ե: Ամեն որ վաղ առավոտյան մտնում ե հորս մոտ, հագցնում ե, լվացվել ե տալիս նրան, թեյ ե խմցնում, ձեռքից բռնած՝ սենյակում միշտանի անգամ անց ու զարձ ե անել տալիս, կեսորին իր ձեռքով ճաշ ե ուտեցնում, յերեկոյան դարձյալ թեյ, զիշերը հանում ե, պառկեցնում ե քննելու, և այդ բոլորը կատարում ե լուռ, յերբեմն միայն խորը հառաչում ե: Շատ անգամ զիշերները լուսացնում ե հիվանդի մոտ՝ աթոռի վրա: Զնայելով թախանձանքիս, վոր այդ պաշտոնի կատարումը ինձ թողնելու Ամեն անգամ քանի նայում եմ նրա գունատ, նահարած գեմքին և անկենդան աշքերին, սաստիկ վշտից և կարեկցությունից սիրտս ճմլվում ե: Իսկույն յերեակայում եմ, թե վորքան մեծ պիտի լինի այն լուռ վիշտը, վոր բուն ե որել նրա սրտում: Սակայն միայն հորս գրությունը չե, վոր նըրան այդպես տանջում ե: Գրիգորի դրությունն ել պակաս մտատանջությունների տարեկա չե նրա համար:—Նամակներիցս մեկի մեջ, կարծեմ, զրել եյի քեզ, վոր Գրիգորը սաստիկ հաղում ե բժիշկների խորհրդով առժամանակ զադարել ե գիմնազիոն հաճախելուց: Իսկ այժմ պիտի ասեմ, վոր նրա գրությունն ավելի վատացել ե: Ակզեններում նրա հազը թեև բոլորովին կտրվեց, բայց յերկու շաբաթից հետո նորից լույս ընկած և մինչեւ այժմ ել շաբունակում ե, որ որի վրա սաստկանալով, այնպես վոր վոչ զիշերը քուն ունի, վոչ ցերեկը—հանդիսու: Ուսումը շարունակելու մասին առայժմ կարելի չի մտածել անգամ: Հորս զրության հետ յես համարյա հաշտվել եմ, բայց այժմ ոկսել ե տանջել ինձ Գրիգորի դրությունը, և այդ տանջանքը պակաս տանջանք չե: Յեթե զոնե մի անգամ տեսնես, թե վորքան նա փոխվել ե և լսես նրա հազը, կսարսափես:

(Նար-Դոս, «Աննա Թարոյան»)

ՑԱՆԿ

Եջ

Նախաբան
Ներածություն

3
5

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

§ 1. Ընդհանուր ծանոթություն	6
§ 2. Յենթակա և ստորոգյալ	6
§ 3. Լրացումներ	7

ՀՆՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 4. Խոսելու որգանները	9
§ 5. Հնչյունների ստորագմանումը	10
§ 6. Ձայնավորներ	10
§ 7. Բաղաձայններ	10
§ 8. Բառ	12
§ 9. Վանկ	13
§ 10. Հնչյունափոխություն	13

ԲԱՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

§ 11. Արմատ	15
§ 12. Ածանց	15
§ 13. Նախածանց	16
§ 14. Բացասական նախածանցներ	17
§ 15. Վերջածանցներ	17
§ 16. Հիմք և վերջավորություն	17
§ 17. Բարդ բառեր, իսկական բարդություններ	18
§ 18. Անիսկական բարդություններ	19
§ 19. Բառերի տեսակներն ըստ իմաստի և արտաքին հնչյունական կողմի	19
§ 20. Նորագույն հապավումներ	20
§ 21. Բարդ ածանցագոր բառեր Տաղաղարձ	21

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§ 22. Ձայնավորներ	22
§ 23. Ա ձայնավորի ուղղագրությունը	22
§ 24. Յեղիկնչյունների ուղղագրությունը	23
§ 25. Յ ձայնակապը	23
§ 26. Բաղաձայնների ուղղագրությունը	24
§ 27. Ղ, Խ բաղաձայնների ուղղագրությունը	24
§ 28. Բ, Փ բաղաձայնների ուղղագրությունը	24
§ 29. Դ, Թ բաղաձայնների ուղղագրությունը	25
§ 30. Գ բաղաձայնի ուղղագրությունը	25
§ 31. Զ, Յ բաղաձայնների ուղղագրությունը	25
§ 32. Զ, Զ բաղաձայնների ուղղագրությունը	26

§ 33. Ո, Յ բաղաձայնների ուղղագրությունը	36
§ 34. Մ բաղաձայնի ուղղագրությունը	27
§ 35. Ոտար բառերի ուղղագրությունը	27

ԽՈՍՔԻ ՄԱՍԻՐ

§ 36. Ընդհանուր ծանոթություն	28
------------------------------	----

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ընդհանուր ծանոթություն	29
37. Հոլովում	30
38. Ուղղական հոլով	31
39. Սեռական հոլով	31
40. Տրական հոլով	31
41. Հայցական հոլով	32
42. Բացառական հոլով	32
43. Դործիական հոլով	32
44. Ներգոյական հոլով	33
45. Գոյականների թիվը	33
46. Գոյականների հոգնակի թվի կազմությունը	33
47. Գոյականի առումները խոսքի մեջ	34
48. Հոլովումներ	35
49. Ի հոլովում	35
50. Հնչունափոխության կանոնները հոլովման ժամանակ	36
51. Ու հոլովում	37
52. Ան հոլովում	38
53. Յան հոլովում	40
54. Վա հոլովում	41
55. Ոշ հոլովում	42
56. Որ հոլովում	43
57. Յ հոլովում	44
58. Այլաձև հոլովումներ	45
59. Հարազիք գյայական անունների հոլովում	45
60. Դրաբար հոլովաձների մնացորդներ	45
61. Հոդեր	46
62. Գոյականացնող ածանցներ	47

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

63. Ածականների տեսակները	49
64. Վորակական ածականներ	49
65. Հատկական կամ հարաբերական ածականներ	50
66. Ածականների գործածությունը գոյականի հետ	50
67. Ածականների փոխանցումները գյոյականի և ընդհակառակն	50
68. Ածականների հոլովման դեպքը	51
69. Ածականացնող վերջածանցներ	51
70. Ածականացնող բացառական նախածանցներ	52

71. Քանակական թվականներ	53
72. Դասական թվականներ	53
73. Թվականների հոլովումը	54
74. Գոյականի գործածությունը թվականով	54

ԴԵՐԱՆՈՒՆ

75. Ընդհանուր ծանոթություն	56
76. Դերանունների տեսակները	56
77. Դերանունների գործածությունը և հոլովումը	57
78. Անձնական դերանուններ	57
79. Ցուցական դերանուններ	58
80. Փոխադարձ դերանուններ	59
81. Հարցական դերանուններ	59
82. Հարաբերական դերանուն	60
83. Անորոշ դերանուններ	60
84. Վորոշալ դերանուններ	60
85. Ժմանական դերանուններ	60

Բ Ա Յ

86. Ընդհանուր ծանոթություն	61
87. Դերայական ձևեր	61
88. Անորոշ դերայ	61
89. Անկատար դերայ	62
90. Ապառնի դերայ	63
91. Վաղակատար դերայ	63
92. Հարակատար դերայ	64
93. Յենթակայական դերայ	64
94. Լղձական դերայ	64
95. Բայի յեղանակային ձևեր	64
96. Դեմք	65
97. Թիվ	65
98. Ժամանակ	65
99. Առնարհում	66
100. Հաստատական ընույթի խոնարհում	66
101. Սահմանական յեղանակ	66
102. Սահմանական յեղանակի բաղադրյալ ժամանակները	67
103. Սահմանական յեղանակի պարզ ժամանակը	68
104. Հրամայական յեղանակ	69
105. Լղձական յեղանակ	69
106. Պայմանական յեղանակ	69
107. Հարկադրական յեղանակ	70
108. Սահմանական յեղանակ (խոնարհման աղյուսակ)	71
109. Հրամայական յեղանակ	73
110. Լղձական յեղանակ	73

§ 111. Պայմանական յեղանակ	լսոնաբնան առյուսուկ	74
§ 112. Հարկադրական յեղանակ	»	74
§ 113. Ժխատական բնույթի խոնարհում »	»	75
§ 114. Բայի սեոը	»	79
§ 115. Բայերի կազմությունը	»	79
§ 116. Ենալ և անալ վերջավորվող բայերի խոնարհումը	»	80
§ 117. Բայի կերպեցը	»	83
§ 118. Բայերի կը բավորական կերպի խոնարհում	»	84
§ 119. Պատճառական բայերի խոնարհում	»	85
§ 120. Անկանոն բայեր	»	86
§ 121. Անկանոն բայերի խոնարհումը	»	87
§ 122. Ա և Հ ածանց ունեցող բայերի խոնարհումը	»	91
§ 123. Պակասավոր բայերի խոնարհումը	»	92
§ 124. Համելավոր բայերի խոնարհումը	»	93
§ 125. Ցերկորդական բաղադրյալ ժամունակներ	»	94

ՄԱԿԱՅ

§ 126. Ընդհանուր ծանոթություն	95
§ 127. Մակրայների տեսակները	95
§ 128. Մակրայական ածանցներ	96

ԿԱՂԵՐ

§ 129. Ընդհանուր ծանոթություն	97
§ 130. Կապերի տեսակները	97
§ 131. Կապվող բառերի հոլովական կիրառությունը	98

ՇԱԴԿԱՊ

§ 132. Ընդհանուր ծանոթություն	99
§ 133. Շագկապների տեսակները	99

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 134. Ընդհանուր ծանոթություն	100
Նախադասության վերլուծություն	101
Վարժություններ	102





«Ազգային գրադարան»

NL0240032

0430

H A pm.
H 4-453a